ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թ.

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմը

1.2 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները

1.3 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքը

2. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ (ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ) ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1. Բարեվարքության ուսումնասիրության համակարգի ներդրման ընթացքը

2.2. Բարեվարքության ուսումնասիրության նպատակը և իրականացման մեխանիզմները

2.3. Բարեվարքության ուսումնասիրության իրականացման ընթացքը և արդյունքները

2.4. Բարեվարքության ուսումնասիրության իրականացման խոչընդոտները

3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

3.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը

3.2 Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ նախատեսվող կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները

3.2 Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ նախատեսվող կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները

3.3 Հանրային իրազեկվածության բարձրացմանը նպաստած ծրագրերը

3.4 Հանրային իրազեկվածության բարձրացմանը նպաստող առաջիկա գործողությունները

4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման կայուն և արդյունավետ կառուցակարգերը

4.1.1 Հայտարարագրման գործընթացը

4.1.2 Հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգը

4.1.3 Հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացը

4.1.4 Հայտարարագրման ժամկետների ու կարգի խախտման նկատմամբ պատասխանատվությունը

4.1.5 Կուսակցության հաշվետվությունը, աուդիտը և կուսակցության պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման գործընթացը

5. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

5.2 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և շահերի բախումը

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

6.1 Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների տեսակները

6.2 Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներ

6.3 Կարգապահական վարույթներ

6.4 Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ վարույթներ

6.5 Վարույթների արդյունքում կայացված վարչական ակտերի բողոքարկումը

7. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Հանձնաժողովի կողմից քննվող դիմումների տեսակները

7.2 Հանձնաժողովի ուսումնասիրած դիմում-գրությունները և մամուլի հրապարակումները

7.3 Մեդիա հրապարակումների ուսումնասիրությունը

8. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ

10. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԶՍՊՈՒՄ

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) առաջին կազմի ընտրությունը տեղի է ունեցել 2019 թվականի նոյեմբերի 19-ին: Այն կազմակերպվել է՝ համաձայն Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի 64-րդ, 135-րդ հոդվածների և 146-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը: Հանձնաժողովի առաջին կազմի ընտրության վերաբերյալ Ազգային ժողովն ընդունել է որոշում՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման մասին հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին»:

Հանձնաժողովի անդամների թեկնածուների ելույթներից հետո գաղտնի քվեարկությամբ տեղի է ունեցել Հանձնաժողովի առաջին կազմի անդամների ընտրությունը: Համաձայն քվեարկության արդյունքների՝ Հանձնաժողովի անդամներ են ընտրվել Լիլիթ Ալեքսանյանը, Էդգար Շաթիրյանը, Նարեկ Համբարձումյանը, Հայկուհի Հարությունյանը և Արամայիս Փաշինյանը: Հանձնաժողովի անդամներն իրենց կազմից 2019 թվականի նոյեմբերի 26-ին հրապարակային անդրանիկ նիստի ընթացքում բաց քվեարկությամբ, ձայների 3 կողմ, մեկ դեմ հարաբերակցությամբ նախագահ են ընտրել Հայկուհի Հարությունյանին:

Հանձնաժողովի անդամներից Էդգար Շաթիրյանը պաշտոնից հրաժարվել է 2019 թվականի նոյեմբերի 26-ին: Հանձնաժողովի աշխատանքները 2019 թվականի

նոյեմբերից մինչև 2021 թվականի սեպտեմբերը կազմակերպվել են չորս անդամների միջոցով:

1.2 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները.

Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոններն ինքնավար պաշտոններ են: Հանձնաժողովի անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով՝ բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման դեպքերի: Հանձնաժողովի գործունեության անխոչընդոտ շարունակականության ապահովման նպատակով 2019 թվականին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի համաձայն՝ Հանձնաժողովի առաջին կազմի անդամները նշանակվել են հետևյալ ժամանակահատվածով՝

1) Հանձնաժողովի երկու անդամ՝ 6-ական տարի

2) Հանձնաժողովի երկու անդամ՝ 4-ական տարի

3) Հանձնաժողովի մեկ անդամ՝ 3 տարի:

2020 թվականի սեպտեմբերին Կոռուպցիայի կանխարգելման մասին ՀՀ լրամշակված օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է Հանձնաժողովի ձևավորման կարգը: Համաձայն իրավակարգավորման՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ, որը կազմված է ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի նշանակած մեկական անդամներից: Իրավակարգավորման սահմանած լրամշակված ընթացակարգով 2021

թվականի սեպտեմբերին ՀՀ Ազգային ժողովն ընտրեց Հանձնաժողովի 5-րդ անդամին՝ Մարիամ Գալստյանին:

Համաձայն Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 1-ի N 02-Լ որոշման՝ Հանձնաժողովի անդամներին վերապահվել են առանձին ոլորտներում աշխատանքների կատարման գործընթացի համակարգման հետևյալ ոլորտները.

Հայկուհի Հարությունյան – կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն (պատասխանատու է Հանձնաժողովի ընդհանուր բնականոն գործունեության ապահովման համար),

Արամայիս Փաշինյան - հայտարարագրերի վերլուծության վարչություն (ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը),

Նարեկ Համբարձումյան – վարույթների և իրավական ապահովման վարչություն (ինչպես նաև մասնագիտական ստորաբաժանումների առանձին գործառույթների իրականացման ընթացքում Հանձնաժողովի գնահատմամբ իրավական աջակցություն ունեցող աշխատանքների համակարգումը),

Լիլիթ Ալեքսանյան – հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության, ինչպես նաև մեթոդական աջակցության վարչությունները,

Մարիամ Գալստյան – բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչություն:

1.3 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքը.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2020 թվականի օգոստոսի 25-ին հաստատել է Հանձնաժողովի կանոնադրությունն ու կառուցվածքը, որը հետագայում լրամշակվել է և ներկայումս ունի հետևյալ պատկերը.

1. հայտարարագրերի վերլուծության վարչություն,
1.1 հայտարարագրման բաժին,
1.2 կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժին,
2. վարույթների և իրավական ապահովման վարչություն,
3. հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչություն,
4. կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն,
5. մեթոդական աջակցության վարչություն,

6.բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչություն,
7. սպասարկող անձնակազմ:

1.4 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմը.

2020 թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը N 1500-Ա որոշմամբ հաստատել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին» հավելվածը, որը հաջորդիվ ենթարկվել է լրամշակումների: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հանձնաժողովն ունեցել է 55 հաստիքային միավոր, որից 40-ը քաղաքացիական ծառայողներ են: Հաշվետու ժամանակահատվածում օրենքով սահմանված կարգով համալրվել է 29-ը հաստիք, որից 27-ը արտաքին մրցույթների միջոցով:

2. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ (ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ) ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1. Բարեվարքության ուսումնասիրության համակարգի ներդրման ընթացքը.

Կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարք կերպարի ձևավորումը, ուստի այս առումով պետության հակակոռուպցիոն քաղաքականությունը, ի թիվս այլնի, ուղղվեց այնպիսի նոր համակարգի ներդրմանը, որը հնարավորություն կտար ստուգելու Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքությունը և, ըստ այդմ, նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող մարմնին (անձին): Վերոնշյալ նպատակով 2020 թվականի մարտի 25-ին ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվեց ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագծի ընդունման արդյունքում ներդրվեց Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության գնահատման հավասարակշռված կառուցակարգ, ինչը, կրելով շարունակական բնույթ, հնարավորություն կընձեռի արդյունավետ պայքար մղելու դատական իշխանությունում

կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով դատական ակտ կայացնելու, մարդու իրավունքների հիմնարար խախտումները կոծկելու դեմ՝ չխաթարելով դատական համակարգի անկախությունը և կայունությունը, քանի որ ողջ գործընթացի հիմնական պատասխանատուն հենց դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված Բարձրագույն դատական խորհուրդն է, իսկ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում՝ Սահմանադրական դատարանը:

Նշված խումբ պաշտոնների համար բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պարտադիր պահանջ սահմանելուց և գործնականում դրա կիրառումից հետո հակակոռուպցիոն քաղաքականությունն ուղղված էր ուսումնասիրություն անցնող պաշտոնների շրջանակի ընդլայնմանը՝ թիրախավորելով հակակոռուպցիոն համակարգում ընդգրկված մարմիններում պաշտոնի հավակնող անձանց:

Այս առումով, 2021 թվականի փետրվարի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքով ներդրվել է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորների ինստիտուտը՝ միաժամանակ նախատեսելով առանձին հաստիքներ սահմանել նաև Վերաքննիչ քրեական դատարանում: Նշված օրենքի անցումային դրույթներով սահմանվել էր, որ վերոնշյալ դատավորների թեկնածուները/հավակորդները պաշտոնի նշանակվելու կամ թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար պետք է օրենքով սահմանված կարգով անցնեն բարեվարքության ուսումնասիրություն:

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոններ և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության կարգավորումները:

Բացի այդ, 2021 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանադրական, Դատախազության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում

լրացում կատարելու մասին» օրենքների ընդունմամբ բարեվարքության ամրապնդման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ սահմանվեց ոչ միայն դատավորների թեկնածուների հավակնորդների, այլև վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի դատավոր դառնալու նպատակով առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, ինչպես նաև դատախազների թեկնածուների և դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատախազների համար:

Հարկ է ընդգծել նաև, որ 2021 թվականի փետրվարին Հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Բարեվարքության ստուգում. հայաստանյան փորձ, ձեռքբերումներ և բարելավման հեռանկարներ» խորագրով աշխատանքային քննարկում: Ի թիվս Հանձնաժողովի աշխատակազմի՝ միջոցառմանը մասնակցել են ՀՀ պետական մարմինների՝ Արդարադատության նախարարության, Բարձրագույն դատական խորհրդի, Ազգային ժողովի, Գլխավոր դատախազության ներկայացուցիչները, Եվրոպական հանձնաժողովի Հարևանության հարցերով գլխավոր տնօրինության բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոզը, ԵԽ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ ՄԶԳ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետները:

Միջոցառման ընթացքում Հանձնաժողովի կողմից ներկայացվեցին բարեվարքության ուսումնասիրության գործընթացում ունեցած ձեռքբերումները և բարելավման հեռանկարները, որոնք կարևոր դերակատարություն ունեն ՀՀ-ում կոռուպցիայի կանխարգելման գործընթացում:

Բացման խոսքով հանդես եկավ նաև Եվրոպական հանձնաժողովի Հարևանության հարցերով գլխավոր տնօրինության բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոզը: Վերջինս կարևորեց Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում բարեվարքության ուսումնասիրության գործընթացը՝ ուղղված կոռուպցիայի կանխարգելմանը և ՀՀ-ում պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ուսումնասիրության համակարգի ներդրմանը: Նա նշեց, որ ՀՀ-ն ունի հնարավորություններ դառնալու Արևելյան Եվրոպայի հետագա նախագծերի առանցքային մասնակիցը կոռուպցիայի դեմ պայքարում, իսկ հայաստանյան փորձը գնահատվեց հաջողված: Միաժամանակ ԵՄ-ի և ԵԽ-ի փորձագետներն իրենց ելույթներում կարևորեցին Հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքները և փոխգործակցությունը բարեվարքության եզրակացությունների կազմման մեթոդաբանության մշակման գործընթացում: Հանձնաժողովի և միջոցառման մասնակիցների մասնակցությամբ քննարկվեցին բարեվարքության գնահատման մեթոդաբանության կատարելագործման հնարավորությունները:

Միջոցառման ժամանակ ներկայացվեցին նաև այն պետական մարմինների կարծիքները, որոնք պաշտոնի նշանակման վերաբերյալ որոշում կայացնելիս ստացել և օգտագործել են Հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության եզրակացությունները՝ կարևորելով բարեվարքության ուսումնասիրության համակարգի ներդրումը Հայաստանում, ինչպես նաև այս ուղղությամբ Հանձնաժողովի դերակատարումը և ջանքերը:

Միջոցառման ավարտին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետները ներկայացրին Նիդերլանդների լավագույն փորձը՝ դատավորների հավակնորդների բարեվարքության ուսումնասիրության և հոգեբանական թեստավորման վերաբերյալ:

Որպես բարեվարքության համակարգի ներդրման ընթացքի առանքային և բաղկացուցիչ տարրեր՝ հարկ է ընդգծել նաև Հանձնաժողովի ձեռքբերումները բարեվարքության հարցաթերթիկի ձևանմուշի և բարեվարքության գնահատման մեթոդաբանության կազմման գործընթացում:

Այսպես. 2020 թվականին Հանձնաժողովը հաստատեց բարեվարքության հարցաթերթիկի ձևանմուշը, որին հաջորդեց հարցաթերթիկի լրացման ուղեցույց-տեսահոլովակի տեղադրումը Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ թեկնածուների համար հարցաթերթիկի լրացման գործընթացն առավել մատչելի դարձնելու նպատակով:

Բարեվարքության հարցաթերթիկի ձևանմուշն առավել կատարելագործելու և ֆունկցիոնալ գործիքի առումով առկա թերությունները շտկելու նպատակով 2021 թվականին Հանձնաժողովը հանձն առավ բարեվարքության հարցաթերթիկի ձևանմուշի լրամշակման աշխատանքները: Նորմատիվ իրավական ակտի նախագիծն այնուհետև ուղարկվեց Արդարադատության նախարարություն՝ փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Ներկայումս, Արդարադատության նախարարության առաջարկությունների հիման վրա, Հանձնաժողովն իրականացնում է հարցաթերթիկի ձևանմուշի նախագիծը վերջնական տեսքի բերելու և դրա հիման վրա նոր ֆունկցիոնալ գործիք ներդնելու աշխատանքները: Դրանց զուգահեռ մշակվում է նաև բարեվարքության հարցաթերթիկի լրացման ուղեցույցը: Վերոնշյալ աշխատանքները Հանձնաժողովը նախատեսում է ավարտին հասցնել 2022 թվականին:

Բարեվարքության գնահատման մեթոդաբանության առնչությամբ հարկ է նշել, որ դեռևս 2020 թվականին ԵԽ և ԱՄՆ ՄԶԳ աջակցության ծրագրի շրջանակներում մշակվեց բարեվարքության գնահատման առաջին մեթոդաբանությունը: Այնուհետև ԵԽ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացվեց տեխնիկական փաստաթուղթ՝ ուղղված

դատավորների հավակնորդների բարեվարքության գնահատմանը: Դրա հիման վրա Հանձնաժողովի կողմից առաջին անգամ իրականացվեց դատավորների հավակնորդների բարեվարքության գնահատումը:

2021 թվականի փետրվարին «Բարեվարքության ստուգում. հայաստանյան փորձ, ձեռքբերումներ և բարելավման հեռանկարներ» խորագրով աշխատանքային քննարկման արդյունքներով Հանձնաժողովը նախաձեռնեց բարեվարքության գնահատման մեթոդաբանության կատարելագործման աշխատանքներ, որոնց հիման վրա կազմվեցին բարեվարքության գնահատման նոր մեթոդաբանությունը և դրա կիրառման ուղեցույցը: Վերջիններս ներկայացվել են ԵԽ փորձագիտական խմբին՝ կարծիքի: Ի պատասխան Հանձնաժողովի ձեռնարկած գործողություններին՝ ԵԽ փորձագիտական խումբը ներկայացրել է համապատասխան դիտարկումներ, ինչպես նաև այլընտրանքային մեթոդաբանական ձեռնարկ:

2.2. Բարեվարքության ուսումնասիրության նպատակը և իրականացման մեխանիզմները.

Բարեվարքության ուսումնասիրությունն ունի նպատակ՝ համապարփակ ուսումնասիրության արդյունքում հնարավորինս կանխել անբարեվարք անձանց նշանակումը պետական պաշտոններում, իսկ առանձին դեպքերում նաև առաջխաղացումը պետական համակարգում:

Այն ներառում է՝

1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում,
2) անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն,
3) անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն,
4) անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն,

5) անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն,
6) անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն:
7) Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է նաև անձի (այդ թվում՝ փաստաբանական գործունեություն իրականացնող)՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, ինչպես նաև նրա հիմնադրած կամ նրա կողմից ղեկավարվող իրավաբանական անձի գործունեության օրինականության, ֆինանսական թափանցիկության ուսումնասիրություն:

Հատկանշական է, որ բարեվարքության ուսումնասիրության գործընթացում Հանձնաժողովն իրավասու է ցանկացած մարմնից կամ անձից (անձանցից) պահանջելու և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային, ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկություններ, արժեթղթերի վերաբերյալ տվյալներ, վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն: Բարեվարքության ուսումնասիրության գործընթացում անձի՝ քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովն իրավասու է դիմելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ:

Բարեվարքության ուսումնասիրության իրականացման հաջող ընթացքի կարևորագույն նախապայմաններից է Հանձնաժողովի կողմից իրավասու մարմիններին կատարած հարցումներին լիարժեք և ճշգրիտ պատասխաններ ստանալը: Հարկ է նշել, որ իրավասու պետական մարմինների, ինչպես նաև մասնավոր սեկտորի՝ համապատասխան տեղեկությունների տիրապետող որոշ կազմակերպությունների հետ Հանձնաժողովի համատեղ աշխատանքն այս առումով, ընդհանուր առմամբ կարելի է համարել հաջողված և արդյունավետ:

Հարկ է նշել, որ Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների կազմման նպատակով Հանձնաժողովն իրականացնում է բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում և գնահատում՝ օգտագործելով օրենքով վերապահված լիազորությունները:

Համադրելով հարցումների արդյունքում ստացված տեղեկությունները բարեվարքության հարցաթերթիկում լրացված տեղեկատվության հետ՝ Հանձնաժողովը յուրաքանչյուր Թեկնածուի առնչությամբ իրականացնում է համալիր վերլուծություն:

Որոշակի խախտումներ կամ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը Թեկնածուներին հնարավորություն է ընձեռում դրանց վերաբերյալ ներկայացնել պարզաբանումներ, ճշգրտող մեկնաբանություններ, ինչպես նաև լրացուցիչ նյութեր: Վերջիններս համադրվում են Հանձնաժողովին արդեն իսկ հայտի դարձած տվյալների հետ, գնահատվում է դրանց արժանահավատությունը և ամբողջականությունը, որից հետո Հանձնաժողովը ձևավորում է թեկնածուի բարեվարքության գնահատականը:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ որոշ մարմինների հետ փոխգործակցությունն ապահովելն ավելի բարդ է: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից Հանձնաժողովին կոնկրետ հարցումների հիման վրա հաճախ չեն տրվել անհրաժեշտ տվյալներ կամ ներկայացվել են թերի և ոչ ամբողջական տեղեկություններ: Նման գործելաոճի հետևանքով ստեղծված իրավիճակը խոչընդոտել է Հանձնաժողովի կողմից բարեվարքության ուսումնասիրությունների իրականացման բնականոն ընթացքը: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից Հանձնաժողովի հարցումների հիման վրա տրվող տվյալները, որոնք ներառում են բարեվարքության ստուգում անցնող անձանց կողմից տրանսպորտային միջոցների ձեռքբերման և օտարման, ինչպես նաև կատարած իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ, էական նշանակություն ունեն անձանց բարեվարքության պատշաճ և ամբողջական ուսումնասիրության, և, համապատասխանաբար, դրանց արդյունքում եզրակացությունների կազմման գործում:

Հանձնաժողովը լիահույս է, որ պետական մարմինների և մասնավոր սեկտորի կազմակերպությունների հետ շահեկան և գործընկերային հարաբերությունները կկատարելագործվեն և կնպաստեն կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված քայլերի արդյունավետ իրականացմանը:

2.3. Բարեվարքության ուսումնասիրության իրականացման ընթացքը և արդյունքները.

Բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են բարեվարքության հարցաթերթիկի մեջ ներկայացված տեղեկությունները՝ դրանց ամբողջականության և արժանահավատության ստուգման, վերլուծության հիման վրա:

Տվյալների ամբողջականության ստուգումը հիմնականում ներառում է թեկնածուի կողմից ներկայացված կոնկրետ տվյալի համեմատություն Հանձնաժողովին այլ աղբյուրներից հասանելի դարձած տվյալների հետ: Մինչդեռ տվյալների արժանահավատության ստուգումը ենթադրում է առավել վերլուծական մոտեցում, տարբեր տվյալների համադրում, դրանց միջև կապերի բացահայտում և եզրահանգում առ այն, թե արդյոք թեկնածուի կողմից տրամադրած այս կամ այն տվյալը հավաստի՞ է: Հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունը ներառում է Հանձնաժողովի կողմից հավաքագրած տեղեկությունները յուրաքանչյուր բաղադրիչի վերաբերյալ, յուրաքանչյուր բաղադրիչում վերհանված գնահատման ենթակա հանգամանքները և վերջում, բարեվարքության ուսումնասիրության մեթոդաբանությանը համապատասխան, արտացոլում է բարեվարքության ընդհանուր գնահատականը՝ դրական, դրական վերապահումով կամ բասացական:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 141 անձի բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել 134 խորհրդատվական բնույթի եզրակացություն: Մեկ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխման արդյունքում: Միաժամանակ, ուսումնասիրություն անցնող անձանցից 6-ը եղել են ԿԿՀ անդամի թեկնածուներ. այս դեպքում Հանձնաժողովն ուսումնասիրում է անձանց միայն գույքային դրությունը:



134 եզրակացություններից 90-ը եղել են դրական, 9-ը՝ բացասական, 35-ը՝ դրական վերապահումով:



Ներկայացված եզրակացություններից 89-ը վերաբերում են դատավորի թեկնածուների հավակնորդներին, 8-ը՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի թեկնածուներին, 2-ը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուներին, 3-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուներին, 33-ը՝ դատախազությունում տարբեր պաշտոնների հավակնող անձանց (13-ը՝ Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի թեկնածուներ, 4-ը՝ դատախազների առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատախազների թեկնածուներ, 9-ը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձինք, 7-ը՝ դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով դատախազների թեկնածուներ):



Դատավորի թեկնածուի հավակնորդների վերաբերյալ կազմված բարեվարքության 89 եզրակացություններից 60-ը եղել են դրական, համապատասխան ցուցակում ընդգրկվել է 34 թեկնածու, 7-ը՝ բացասական, համապատասխան ցուցակում ընդգրկվել է 1 թեկնածու, 22-ը՝ դրական վերապահումով, համապատասխան ցուցակում ընդգրկվել է 9 թեկնածու:



Վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության 8 եզրակացություններից 5-ը եղել են դրական, որոնցից առաջախաղացման ցուցակում ընդգրկվել են 2 թեկնածու, 1-ը՝ բացասական, թեկնածուն ընդգրկվել է առաջխաղացման ցուցակում, 2-ը՝ դրական վերապահումով, թեկնածուներից ոչ ոք չի ընդգրկել առաջխաղացման ցուցակում:



Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացություններից մեկը եղել է դրական, մյուս թեկնածուի վերաբերյալ եզրակացություն չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվելու արդյունքում: Երկու թեկնածուներն էլ ընտրվել են Բարձրագույն դատական խորհրդի անդամ:



Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության 3 եզրակացությունները եղել են դրական վերապահումով, մեկ թեկնածու ընտրվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ:



Դատախազությունում տարբեր պաշտոնների հավակնող անձանց վերաբերյալ կազմված բարեվարքության 33 եզրակացություններից[1] 24-ը եղել են դրական, որից համապատասխան ցուցակում ընդգրկվել կամ պաշտոնի նշանակվել է 15 թեկնածու, 1-ը՝ բացասական, որից նշանակում չի եղել, 8-ը՝ դրական վերապահումով, որից 5 թեկնածու ընդգրկվել է համապատասխան ցուցակում կամ նշանակվել պաշտոնի:





[1] Հաշվարկը ներառում է Հանձնաժողովի կողմից միայն 2021 թվականին տրամադրված եզրակացությունները:

2.4. Բարեվարքության ուսումնասիրության իրականացման խոչընդոտները.

Բարեվարքության ուսումնասիրության գործընթացում ի հայտ եկած հիմնական խնդիրը հրապարակային հաշվետվողականությունն է, այսինքն՝ այն հանգամանքը, որ եզրակացությունները հրապարակման ենթակա չեն: Ուստի, գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով Հանձնաժողովը նախատեսում է առաջիկայում հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որի շրջանակներում, ի թիվս մի շարք փոփոխությունների, կառաջարկվի Հանձնաժողովի կողմից տրված բացասական եզրակացության պարագայում անձին համապատասխան պաշտոնի նշանակել պատճառաբանված որոշման հիման վրա, ինչպես նաև նշված դեպքերում Հանձնաժողովի պաշտոնական կայքում կհրապարակվի անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը:

Բարեվարքության ուսումնասիրության իրականացման ընթացքում որպես ի հայտ եկած խոչընդոտ կարելի է նշել նաև որոշ պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրության համար նախատեսված օրենսդրական սեղմ ժամկետները:

Թեկնածուների կողմից բարեվարքության հարցաթերթիկի լրացման ընթացքում ի հայտ եկած որոշ տեխնիկական խնդիրների լուծման նպատակով ներկայումս լրամշակվում և կատարելագործվում է ինչպես բարեվարքության հարցաթերթիկի ձևանմուշը, այնպես էլ վերջինիս լրացման ուղեցույցը:

3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

3.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովին վերապահված է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և միջոցառումների իրականացում:

Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական գործառույթի շրջանակում առաջնահերթ է բնակչության կրթումը, կոռուպցիա երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում: Կոռուպցիայի կանխարգելման թեմատիկայով կրթական ծրագրերը ենթադրում են նաև հանրային ծառայողների մասնագիտական վերապատրաստումներ, պետական ծառայողների վերապատրաստման դասընթացներում դրանց ընդգրկումը:

Հանձնաժողովին տրված լիազորությունների շրջանակում 2021 թվականին

իրականացվել է ուսումնասիրություն կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ մինչ այդ պահն իրականացված կրթական ծրագրերի վերաբերյալ: Այս նպատակով Հանձնաժողովը հարցումներ է կատարել Հայաստանում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և կոռուպցիայի կանխարգելման թեմատիկայով կրթական ծրագրեր իրականացրած ընդհանուր թվով 15 կազմակերպությունների (Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ) շրջանում:

Հարցումների արդյունքում պարզվել է, որ բուհերում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող կրթական ծրագրերն ընդգրկված են իրավունքի հիմունքներ առարկայի շրջանակում, դասավանդվող թեմաները միմյանցից էապես տարբերվում են, առկա է ուսումնամեթոդական ձեռնարկների և դիդակտիկ այլ պարագաների կարիք:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փոխգործակցությունը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու նպատակով 2021 թվականի սեպտեմբերին ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագրի նպատակը ՀՊՏՀ-ի հետ կրթական ծրագրերի մշակման և իրականացման, ուսանողների ուսումնաարտադրական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման, կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կրթական առարկայական ծրագրերի մշակման և մի շարք այլ ոլորտներում համագործակցային կապերի հաստատումն ու դրանց շարունակական զարգացումն է:

3.2 Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ նախատեսվող կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները

2021 թվականին Հանձնաժողովը նախաձեռնել էր համագործակցության ձևավորում Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ՝ կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կրթական ծրագրերի մշակման և ՀԱՀ-ում դասավանդման նպատակով: 2021 թվականի ընթացքում ՀԱՀ և ԿԿՀ ներկայացուցիչների մասնակցությամբ կայացել է 2 քննարկում, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել ԿԿՀ աջակցությամբ ՀԱՀ ուսումնական պլաններում նոր հակակոռուպցիոն, բարեվարքության ամրապնդմանն ուղղված առարկայի ներառման հնարավորություններին՝ ըստ Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Մեթյու Մուրեյի հեղինակած դասընթացի, այդ դասընթացի տեղայնացման և ՀԱՀ մասնագիտական կրթական ծրագրերում այն ինտեգրելու հնարավորություններին, ՀԱՀ-ի կողմից այլ բուհերում անցկացվող հակակոռուպցիոն բովանդակությամբ առարկաներ դասավանդող դասախոսների վերապատրաստվելու հնարավորություններին, ԿԿՀ-ի, ՀԱՀ-ի և Կոլումբիայի համալսարանի համատեղ համագործակցության հնարավորություններին՝ Հայաստանում հակակոռուպցիոն կրթության կազմակերպման գործընթացին աջակցելու համատեքստում, դասընթացը կյանքի կոչելուն և նրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայթայթելու հնարավորություններին: Համաձայն քննարկման՝ Հանձնաժողովի, Հայաստանի ամերիկյան համալսարանի և Կոլումբիայի համալսարանի միջազգային և հանրային կապերի պրոֆեսոր Մեթյու Մուրեյի հետ համագործակցության արդյունքում առաջիկայում նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ, որը կզբաղվի Կոլումբիայի համալսարանի կողմից առաջարկված կրթական ծրագրի տեղայանացման և հակակոռուպցիոն բովանդակությամբ առարկայական ծրագրի մշակման աշխատանքներով: Առաջարկվող կրթական ծրագրի հիմնական նպատակն է, որ ուսանողները հասկանան և գնահատեն կոռուպցիայի լայնորեն տարածված սահմանումները, կոռուպցիայի տեսությունները, կոռուպցիայի պատճառները և կոռուպցիայի մասշտաբները չափելու ուղիները: Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողները կկարողանան քննարկել հիմնական տեսությունները, որոնք փորձում են բացատրել կոռուպցիան, և որոնք առաջնորդում են հակակոռուպցիոն ներկայիս քաղաքականությունը, օգտագործել հետազոտական տարբեր գործիքներ և մեթոդներ՝ գնահատելու այս կամ այն երկրում կոռուպցիայի մասշտաբները: Դասընթացում ներառված թեմաներից են՝ «Կոռուպցիոն տեսությունները», «Կոռուպցիան որպես տնտեսական խնդիր», «Կոռուպցիա, ահաբեկչություն և քաղաքական բռնություն» և այլ թեմաներ:

3.3 Հանրային իրազեկվածության բարձրացմանը նպաստած ծրագրերը

Կոռուպցիայի կանխարգելման թեմատիկան հանրային շրջանակներում

առավել տարածելի դարձնելու և Հանձնաժողովի գործառույթներն առավելապես լուսաբանելու նպատակով www.cpcarmenia.am պաշտոնական կայքէջում պարբերաբար տեղադրվում են Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2021 թվականի երկրորդ կիսամյակում www.cpcarmenia.am կայքում շուրջ 60 հրապարակում է տեղադրվել: Հանձնաժողովի անդամների և ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպվել են Հանձնաժողովի գործառույթներից բխող մոտ երեք տասնյակ հարցազրույցներ: Դրանք վերաբերել են հանրային ծառայողների վարքագծի նկատմամբ միասնական պահանջներին, պաշտոնյայի առերևույթ կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործունեության վերաբերյալ դիմումներին և քաղաքացիներից Հանձնաժողովին հասցեագրվող դիմումների ընթացքին, հայտարարագրման նոր համակարգի վերագործարկմանը, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի լրացման և ԿԿՀ կողմից դրա ուսումնասիրության գործընթացին, Հանձնաժողով ներկայացվող տարեկան հայտարարագրերի մի քանի առանձնահատկություններին և այլն: Այս և Հանձնաժողովի գործառույթներից բխող տեղեկատվական բնույթի մյուս հաղորդագրությունները տեղադրված են Հանձնաժողովի cpcarmenia.am պաշտոնական կայքի նորություններ բաժնում, դրանք տարածվել են սոցիալական հարթակներում և տեղ գտել այլ

լրատվամիջոցների լրահոսներում: Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն գործարկվել և շարունակաբար իր լսարանն է ընդարձակել Հանձնաժողովի Ֆեյսբուքյան էջը: Այս պահին էջն ունի մոտ 2200 հետևորդ, որոնց գերակշիռ մասը՝ 90 տոկոսը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են՝ մոտ 80 տոկոսը երևանաբնակ, և միայն 10 տոկոսն են ՌԴ, ԱՄՆ, եվրոպական երկրների ու տարածաշրջանի այլ պետությունների քաղաքացիներ: Ֆեյսբուքում Հանձնաժողովի աշխատանքներին հետևողների 39 տոկոսը տղամարդիկ են, 61 տոկոսը՝ կանայք: Ֆեյսբուքյան հետևողների 40 տոկոսը 25-44 տարեկանների տարիքային խմբում է:



Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի գործառույթներին առնչվող հարցադրումների վերաբերյալ բազմաթիվ ԶԼՄ-ների տրամադրվել են պարզաբանումներ: Հանձնաժողովը սերտորեն համագործակցում է շահագրգիռ քաղաքացիական նախաձեռնությունների հետ: Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում ՀՀ արդարադատության նախարարի մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ քաղհասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում կարևորվել է հասարակական կազմակերպությունների դերակատարումը կոռուպցիայի կանխարգելմանը միտված գործընթացներն ամենօրյա օրակարգում ունենալու հարցը և վերջիններիս ներգրավվածությունը:

Կազմակերպվել են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների փոխայցելություններ: Մասնավորապես, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի նախաձեռնությամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մի խումբ ուսանողներ ճանաչողական այցով եղել են Հանձնաժողովում, ծանոթացել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի

կանխարգելման ուղղությամբ իրականացվող գործընթացներին: Հանձնաժողով են այցելել և տեղում աշխատանքային գործունեությանն ու օրենքով պատվիրակված լիազորություններին են ծանոթացել նաև «Թրանսփարենսի ինթերնեշնլ» Հայաստան հակակոռուպցիոն կենտրոնի 4-րդ Հակակոռուպցիոն դպրոցի մասնակիցները: Հանձնաժողովի աշխատակազմը որակյալ մասնագետներով համալրելու նպատակով կազմակերպվել են ճանաչողական բնույթի քննարկումներ, այցելություններ բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև մասնակցություն է ցուցաբերվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպած աշխատանքի տոնավաճառին:

3.4 Հանրային իրազեկվածության բարձրացմանը նպաստող առաջիկա գործողությունները

Առաջիկայում նախատեսվում է.

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց համար վարքագծի կանոնների վերաբերյալ վերապատրաստում հետևյալ թեմաներով.

1.1 շահերի բախում և շահերի բախման կառավարում

1.2 անհամատեղելիություն

1.3 վարքագծի կանոններ և այլ սահմանափակումներ

1.4 հայտարարագրման համակարգ՝ դրա կարևորությունն ու անհրաժեշտությունը

1.5 կոռուպցիոն ռիսկերը պետական կառավարման համակարգում և դրանց կառավարումը,

2. ներդրված ուսումնական ծրագրերը ԲՈՒՀ-երում և հանրակրթական դպրոցներում,

3. ուսուցիչների և ծնողների համար կազմակերպված վերապատրաստումներ,

4. կոռուպցիայի կանխարգելման թեմատիկայով սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում՝ հանրային լայն լսարան ունեցող անձանց և պետական գործիչների ներգրավմամբ,

5. զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի կողմից տարածվող թեմատիկ տեսանյութեր,

6. Հանձնաժողովի մամուլի ասուլիսներ:

4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման կայուն և արդյունավետ կառուցակարգերը

4.1.1 Հայտարարագրման գործընթացը

Պետական պաշտոնատար անձանց հաշվետվողականությունն ապահովելու, հայտարարագրման հետ կապված իրավահարաբերությունների առավել ամբողջական կարգավորման, հայտարարագրման հետ կապված հարաբերությունների արդյունավետ կարգավորման համար անհրաժեշտ այլ մեխանիզմների ներդրման, հայտարարատու պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության բարձրացման և հայտարարագրման ինստիտուտի կատարելագործման, ռիսկայնությունից ելնելով՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի և հայտարարագրման ենթակա տվյալների ցանկի ընդլայնման նպատակով 2021 թվականին կատարվել են օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես՝ 19.01.2021 թվականին ընդունված և 17.02.2021 թվականին ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ ՀՕ-51-Ն օրենքով կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը՝

- ✓ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարներ,
- ✓ 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներ,
- ✓ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար,
- ✓ Երևան համայնքի ավագանու անդամներ,
- ✓ հարկային, մաքսային ծառայությունների գլխավոր պաշտոններ,

- ✓ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք,
- ✓ 2020 թվականի մարտի 1-ի դրությամբ դատավորի պաշտոնավարող օգնականներ:

Փոփոխվել են իրավիճակային հայտարարագրի ներկայացման պահանջները՝

Հայտարարատու պաշտոնատար անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, Հանձնաժողով է ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագրում ներառվում են հայտարարագրման ենթակա գործարքին նախորդող տարվա կամ իրավիճակային հայտարարագիր պահանջելու որոշման ընդունմանը նախորդող՝ 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Եթե նախկինում իրավիճակային հայտարարագիրը ներկայացվում էր տվյալ ամսաթվի դրությամբ, օրենքի սույն դրույթի փոփոխությամբ՝ Հանձնաժողովին տրվել է իրավասություն՝ պահանջելու տեղեկություններ նաև 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի վերաբերյալ:

Հստակեցվել է հանձնված և չհրապարակված հայտարարագրում ուղղում կատարելու կարգը՝

Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և չհրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը կարող են հայտարարագրում ուղղում անելու միջոցով վերացնել հայտարարագիրը հանձնելուց հետո՝ քառօրյա ժամկետում: Հայտարարագրում փոփոխություն կատարելը կանոնակարգելու նպատակով Հանձնաժողովը մշակել է ուղղման դիմումի ձևաչափ:

Ընդլայնվել և հստակեցվել է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում ներառվող տեղեկությունների շրջանակը՝

- ✓ Նվազեցվել է թանկարժեք գույքի նվազագույն արժեքային շեմը՝ ութ միլիոն ՀՀ դրամից չորս միլիոն ՀՀ դրամի (կամ դրան համարժեք արտարժույթի),
- ✓ Ներառվել է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է

երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

Ներդրվել է նոր՝ ծախսերի հայտարարագրման ինստիտուտ՝

- ✓ Այս ինստիտուտի շրջանակում հայտարարատուի համար պարտականություն է սահմանվել հայտարարագրելու ՀՀ դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված ծախսերը: Նշված կարգավորումների արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն ունի ստանալու ամբողջական տեղեկատվություն հայտարարատու պաշտոնատար անձի ֆինանսական դրության վերաբերյալ, ինչը կնպաստի հնարավոր խախտումների բացահայտմանը:

- ✓ Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն առաջին անգամ ներկայացնում են՝ 2021 թվականի հունիսի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրում և 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2022 թվականի հունվարի 1-ից:

19.01.2021 թվականին ընդունված և 17.02.2021 թվականին ուժի մեջ մտած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ՀՕ-52-Ն օրենքով կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

- ✓ Հայտարարագրերի վերլուծության ընթացքում գույքի փաստացի տիրապետումը, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ հայտարարատուի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալը կամ այդ գույքը տնօրինելն ստուգելու նպատակով Հանձնաժողովն իրավասու է դիմելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ:

- ✓ Հանձնաժողովին իրավասություն է տրվել հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, անձի գույքի էական փոփոխության (գույքի ավելացում, պարտավորությունների նվազում կամ ծախս) կասկածի դեպքում նրանից

պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:

- ✓ Նվազեցվել է օրինական համարվող միանվագ ստացվող կամ տրվող կանխիկ գումարի շեմը՝ 1.000.000 ՀՀ դրամ նախկին 2.000.000 ՀՀ դրամի փոխարեն: Ստացված եկամուտը չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 1.000.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել է կանխիկ ձևով:

Հաշվի առնելով նշված օրենսդրական փոփոխությունները՝ Հանձնաժողովը մշակել և կիրառության մեջ է դրել «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերի լրացման ուղեցույց»-ը: (ԿԿՀ որոշում N 01-Լ 17.09.2021թ.)

Հայտարարագրերի լրացման գործընթացը առավել դյուրին դարձնելու համար էլեկտրոնային համակարգում հայտարարագրման ենթակա տվյալների դաշտերում ավելացվել են հուշող մեկնաբանություններ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ 31.12.2021 թվականի դրությամբ հայտարարատու պաշտոնատար անձինք են՝

- ✓ պետական պաշտոն զբաղեցնող անձինք,
- ✓ համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների պաշտոն զբաղեցնող անձինք,

- ✓ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք,
- ✓ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը,
- ✓ զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոններ զբաղեցնող անձինք,
- ✓ հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք,
- ✓ ոստիկանության, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք,
- ✓ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք:

Նշված պաշտոնները զբաղեցնող անձինք «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված կարգով, ըստ պաշտոնների խմբերի դասակարգման, Հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր:

Գույքի հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը, բաժնային, պարտքային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բացառությամբ բանկային վկայագրի), բանկային ավանդը, չորս միլիոն ՀՀ դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող ցանկացած թանկարժեք գույք, դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա) և այլն:

Եկամուտների հայտարարագիրը ներառում է ՀՀ դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները, ստացված փոխառությունները, վարկերը (այդ թվում՝ հիպոտեկային), ինչպես նաև վերջիններիս դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը, կենսաթոշակը, ժառանգության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները, տարատեսակ գործառույթների արդյունքում ստացված եկամուտներն ու վճարները, ապահովագրական հատուցումները, կենսաթոշակը և այլն:

Շահերի հայտարարագիրը ներառում է՝ մասնակցությունը և/կամ առևտրային կազմակերպություններում ներկայացվածությունը առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից ՀՀ կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը:

Ծախսերի հայտարարագիրը ներառում է ՀՀ դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը, շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը, գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը, վարկի մարմանն ուղղված վճարումները, անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը: Նշված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երեք միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հայտարարագրման ենթակա է նաև ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է Հայաստանի Հանրապետության երկու միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հայտարարագիրը լրացվում և ներկայացվում է էլեկտրոնային եղանակով: Հայտարարագիրը ոչ էլեկտրոնային եղանակով (թղթային) կարող է ներկայացվել Հանձնաժողովի սահմանած բացառիկ դեպքերում:

Հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր: Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար: Հայտարարատու պաշտոնատար անձինք

պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

Հայտարարագիրը դրա հանձնման օրվան հաջորդող հինգերորդ օրը հրապարակվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու դեպքում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու դեպքում, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ և պատասխանատու են դրանց իսկության համար:

Հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

Հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում նշում է նաև իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ: Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք չունեն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և չհրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը կարող են հայտարարագրում ուղղում անելու միջոցով վերացնել հայտարարագիրը հանձնելուց հետո՝ քառօրյա ժամկետում, իսկ հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու նպատակով կարող են դիմել Հանձնաժողով: Հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե դրանում նշված տվյալի անհամապատասխանությունն այլ կերպ բացահայտված է: Դիմումը բավարարվելու դեպքում հայտարարագրում անհամապատասխանությունը վերացնելու ժամկետը չի

կարող գերազանցել յոթ աշխատանքային օրը: Հայտարարագրում փոփոխություն է կատարվում նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի արդյունքով հանձնաժողովը հայտարարագրում արձանագրում է տվյալների անհամապատասխանություն, որը վերացնելու համար տրամադրվում է եռօրյա ժամկետ:

Հանձնաժողովն իրավասու է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, անձի գույքի էական փոփոխության կասկածի դեպքում նրանից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր, որը ներկայացվում է մեկամսյա ժամկետում: Հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած:

Ի թիվս այլ գործառույթների՝ էլեկտրոնային փոստի և հեռախոսազանգերի սպասարկման միջոցով շարունակական աջակցություն է ցուցաբերվում հայտարարատուներին հայտարարագրերի լրացման գործընթացում:

4.1.2 Հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգը

Հայտարարագրման գործող էլեկտրոնային համակարգը ստեղծվել է շուրջ տասը տարի առաջ: Հայտարարատուների թվի, հայտարարագրերում ներկայացվող տեղեկությունների աճին զուգընթաց գործող համակարգը ներկայում աշխատում է գերծանրաբեռնված ռեժիմով, հայտարարագրման գործընթացը մեծամասամբ վերահսկվում է մեխանիկական աշխատանքի միջոցով, ինչը լրացուցիչ ռեսուրսների կարիք, մեխանիկական հավանական սխալների ռիսկ է առաջացնում:

Հանձնաժողովն այս պահին իրականացնում է հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթաց, որի արդյունքում նախատեսվում է մեխանիկական կատարվող աշխատանքների կրճատում, հայտարարագրման համակարգի բարելավում, հաշվետվողականության ու թափանցիկության պատշաճ ապահովում: Հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի ստեղծման աշխատանքները մեկնարկել են դեռևս 2021 թվականի դեկտեմբերին: Պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունենում Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցների, համակարգը նախագծող ընկերության ներկայացուցիչների, փորձագետների և տվյալների էլեկտրոնային շտեմարանների միջոցով փոխգործելիության հարթակն ապահովող կառույցի ներկայացուցիչների հետ: Անընդհատ նոր մտքեր ու գաղափարներ են գեներացվում, քննարկվում

համապատասխան մասնագետների հետ՝ գտնելու ամենաօպտիմալ լուծումը, որը շահագրգիռ բոլոր կողմերի համար դրական ազդեցություն կունենա:

Հանձնաժողովի հայտարարագրման թվային նոր հարթակի համար մշակված տեխնիկական առաջադրանքը նախատեսում է, որ բացի որակյալ տվյալների հավաքագրումից, համակարգն ունենալու է բարդ վերլուծական և հաշվետվողական հնարավորություններ, ինչպես նաև կապվելու է Կառավարության փոխգործելիության հարթակի հետ՝ տարբեր մարմիններից ստացված տեղեկատվության ինքնաշխատ ներմուծման և համադրման նպատակով:

Համակարգի արդիականացումը մեծապես միտված է հայտարարագրման և վերլուծության ողջ գործընթացը ավտոմատացնելուն ու առավել դյուրին դարձնելուն: Մասնավորապես՝ նոր համակարգի ներդրմամբ հայտարարատուների համար հայտարարագրի լրացման գործընթացը կլինի շատ ավելի դյուրին և թույլ կտա հնարավորինս խուսափել մեխանիկական և այլ սխալներից: Սա միաժամանակ երկու խնդիր կլուծի, քանի որ նախատեսվում է տվյալներն էլեկտրոնային շտեմարաններից ինքնաշխատ բեռնելու արդյունքում անճշտություններ հայտնաբերելու դեպքում մեկ կոճակի օգնությամբ տվյալ կառույցին հաղորդագրություն ուղարկել՝ տվյալները վերանայելու և ճշգրտելու համար: Հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի հնարավորությունները էականորեն տարբերվելու են գործող համակարգից: Թվային նոր համակարգը հնարավորություն է տալու բարելավելու հայտարարագրման գործընթացը, մասնավորապես՝ ավելի դյուրին է դարձնելու հայտարարագիր լրացնելը հայտարարատուների համար և հայտարարագրերի վերլուծությունները՝ համապատասխան մասնագետների համար: Ամբողջ գործընթացն ավտոմատացվելու է, կլինի հայտարարագրվող տվյալների ինքնաշխատ բեռնման հնարավորություն տարբեր գերատեսչությունների էլեկտրոնային շտեմարաններից, և հայտարարատուն ստիպված չի լինի ամեն անգամ միևնույն տվյալները նորից լրացնել: Համակարգը հնարավորություն կտա արհեստական բանականության միջոցով մշակել և ունենալ կոնկրետ պայմանների վրա կառուցված ավտոմատացված հաշվետվություններ, կապահովի առավելագույն թափանցիկություն և հաշվետվողականություն, քանի որ իրական ռեժիմով առկա հրապարակման ենթակա տվյալները ներբեռնելու, դրանց հիման վրա վերլուծություն իրականացնելու հնարավորություն կլինի, կկիրառվեն վերահսկողության և վերլուծության արդյունավետ կառավարման գործիքներ: Այստեղ խոսքը բավականին մեծ ծավալի ինֆորմացիայի հետ աշխատանքի մասին է, որը ներառում է հայտարարատու պաշտոնատար անձանց, նրանց ընտանիքի անդամների կողմից ըստ տարիների և հայտարարագրերի տեսակների հայտարարագրված տվյալները:

Հայտարարագրերի վերլուծությունը ներկա պահին իրականացվում է պահանջվող տվյալները մեխանիկական եղանակով կիսաավտոմատացված ծրագրեր մուտքագրելու միջոցով: Վերլուծական նոր մեթոդների և գործիքների ներդրմամբ հայտարարագրերի վերլուծության գործընթացն այժմ ներառում է ոչ միայն ստացված տվյալների պարզ համադրումն այլ աղբյուրներից ստացված տվյալների հետ, այլ հայտարարագրերի համապարփակ վերլուծության ընթացքում ստուգվում է գույքի փոփոխության համապատասխանությունն օրինական եկամուտներին, բացահայտվում են հայտարարագրերում ներառված տեղեկությունների առերևույթ անհամապատասխանությունները գործող իրավակարգավորումներին:

Թվային տեխնոլոգիաները ինտեգրելու և հատուկ մշակված ալգորիթմների կիրառման արդյունքում հնարավորություն կստեղծվի հայտարարագրերի վերլուծության գործընթացն առավել արդյունավետ դարձնել: Հայտարարագրերի վերլուծությանը կօժանդակեն ալգորիթմերը, որոնք մշակվելու են ռիսկային ցուցիչների հիման վրա: Սրա արդյունքում համակարգը հնարավորինս զերծ կլինի մարդկային գործոնով պայմանավորված ընտրողական մոտեցումներից:

Կոռուպցիայի կանխարգելման գործընթացում կարևոր է նաև շեշտել պետական և մասնավոր՝ SS ոլորտի համագործակցության մասին: Նոր էլեկտրոնային համակարգի ստեղծման համար ընտրվել է SS ոլորտի կայացած Sinergy international systems կազմակերպությունը, որի հետ շարունակական համագործակցության արդյունքում կիրառվում են հնարավոր բոլոր տեխնիկական գործիքները՝ առավելագույն արդյունքի հասնելու համար:

4.1.3 Հայտարարագրեի ստուգման և վերլուծության գործընթացը

Հայտարարագրերի վարման ամբողջ գործընթացը կանոնակարգելու և գործընթացի հաջորդական քայլերի ուղեցույցը ուրվագծելու նպատակով Հանձնաժողովը մշակել է հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը: Մեթոդաբանական ձեռնարկի նպատակն է սահմանել Հանձնաժողովի կողմից իրականացվող հայտարարագրերի վերլուծության սկզբունքները, ինչպես նաև տրամադրել մեթոդական աջակցություն վերլուծության ընթացքում հայտարարագրերում արտացոլված ֆինանսական հոսքերի ուսումնասիրության և գնահատման համար: Ձեռնարկը ներկայացնում է ներքին ընթացակարգերի վերլուծական հիմքերը, որոնք կարգավորում են Հանձնաժողովի համապատասխան աշխատանքային գործընթացները՝ իրավական և վարչական կանոնների համաձայն:

Ձեռնարկը նկարագրում է նաև հայտարարագրերի ռեեստրի վարման հիմնական քայլերը, ինչպիսիք են պետական պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների շրջանակի նույնականացումը, հայտարարատուների հետ հաղորդակցման ռեժիմը և այլն:

Հայտարարագրերի վերլուծության համար ձեռնարկն առաջարկում է բազմափուլային մոտեցում, որը ներառում է համապատասխանության, ձևական պահանջների պահպանման և արժանահավատության ստուգումները, ինչպես նաև աուդիտորական ստուգման իրականացումը:

Վերլուծության փուլերը ներկայացվում են որպես որոշակի քայլեր ներառող քայլ առ քայլ հրահանգներ, որոնք կարող են իրականացվել ավտոմատացված համակարգի օգտագործման միջոցով: Այս քայլերի իրականացումն ապահովում է, որ հայտարարագրերը ներկայացվեն սահմանված ժամկետներում և պարունակեն բոլոր պարտադիր տվյալները, հայտնաբերվեն թաքնված ապօրինի եկամուտների ռիսկային ցուցանիշները:

Ֆինանսական հոսքերի վերլուծությունը ձեռնարկի մոտեցման հիմնական տարրն է ինչպես արժանահավատության ստուգման փուլում, այնպես էլ աուդիտորական ստուգման ընթացքում: Ֆինանսական հոսքերի վերլուծությունը ստուգում է մուտքային ֆինանսական հոսքի չափը և աղբյուրները, ելքային ֆինանսական հոսքի չափն ու նպատակները և մուտքային և ելքային ֆինանսական հոսքերի հարաբերակցությունը:

Ձեռնարկը սահմանում է ռիսկային ցուցանիշները, որոնք կապված են մուտքային և ելքային ֆինանսական հոսքերի և դրանց հարաբերակցության հետ: Ռիսկային ցուցանիշներն օգտակար գործիքներ են՝ որոշելու, թե որ հայտարարագրերն են առաջնահերթության սկզբունքով ենթարկվում աուդիտորական ստուգման և ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել այդ ստուգման ընթացքում: Ռիսկային ցուցանիշները մշակվել են՝ հաշվի առնելով դրանց մոնիթորինգի համար ավտոմատ համակարգ մշակելու և օգտագործելու հեռանկարը:

Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի աջակցությամբ ստեղծված «Պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի մշակման և վերլուծության ձեռնարկ»-ի հիման վրա մշակվել է նաև գործառնական ուղեցույց, որը նկարագրում է պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության գործընթացը:

Փաստաթղթում ներկայացված են հայտարարագրերի վերլուծության գործընթացի տեխնիկական ուղեցույցները և մասնավորապես ներառում է՝

- ✓ պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության գործընթացում աուդիտորական ստուգման մանրամասները և գործնական քայլերը,
- ✓ համապատասխան պետական հաստատությունների ցանկը, որտեղ անհրաժեշտ է ուղարկել տեղեկատվություն ձեռք բերելու հարցումները և ստանալ լրացուցիչ տեղեկատվություն,
- ✓ աուդիտորական ստուգման ընթացքում կիրառվող գործիքի և կայքի տեխնիկական ուղեցույցը,
- ✓ գործնական և մանրամասն ուղեցույցը՝ հայտարարագրված տվյալները համեմատելու, ստուգելու և վերլուծելու համար:

Հանձնաժողովը հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության և ռիսկային չափորոշիչների հիման վրա ստուգում և վերլուծում է հայտարարագրերը, քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

Հաշվի առնելով, որ հայտարարագրերի ներկայիս էլեկտրոնային համակարգը չունի վերլուծության որևէ հնարավորություն և որ հավաքագրված տվյալների որակը միշտ չէ, որ թույլ է տալիս տվյալների ավտոմատ վերլուծություն կատարել՝ Հանձնաժողովը մշակել է Excel-ի վրա հիմնված միջանկյալ վերլուծական գործիք, որը ներառել է որոշակի ռիսկային ցուցանիշներ և այդպիսով թույլ է տալիս գնահատել հայտարարագրված տվյալների ռիսկայնությունը:

Դասական ստուգումը բաղկացած է 4 քայլից՝ համապատասխանության ստուգում, ձևականության պահպանման (ֆորմալ) ստուգում, արժանահավատության ստուգում, աուդիտորական ստուգում (աուդիտ), որոնք միտված են Հանձնաժողովի կողմից իրականացվող հետևյալ գործառույթներին՝

- ✓ հայտարարագիր լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգում,
- ✓ հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում,
- ✓ հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծություն,

- ✓ ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն,
- ✓ հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:

Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր:

Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատուի գույքի էական փոփոխությունը կամ ծախսը ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովն իրավասու է՝

- ✓ հայտարարատուից հայցելու պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր՝ դրանք ներկայացնելու համար տրամադրելով 10-30 օր ժամկետ,
- ✓ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատուի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձից, հայտարարագրված կամ հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անձից կամ այն անձից, որին սեփականության իրավունքով կարող է պատկանել հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող կամ օգտագործվող անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թանկարժեք գույքը, պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր, եթե վերը նշված կասկածները կարող են փարատվել իրավիճակային հայտարարագրով ներկայացնելու ենթակա տվյալների վերլուծությամբ: Այս դեպքում Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ նշելով այն հանգամանքները, որոնք կարող են պարզվել իրավիճակային հայտարարագիրը ներկայացնելով:

Եթե հայտարարատուն սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, ապա Հանձնաժողովը նյութերն ուղարկում է գլխավոր դատախազություն: Հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի գույքի էական

փոփոխության՝ օրինական եկամուտներով ողջամտորեն չհիմնավորվելու կասկածի և անկանխիկ գործարքներ կատարելու հիմքերով հանձնաժողովի կողմից նյութեր են նախապատրաստվել և ուղարկվել Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքում մեկամսյա ժամկետում վերլուծության է ենթարկում նույն օրենքին համապատասխան ներկայացված հայտարարագիրը և դրա արդյունքները տրամադրում դիմող մարմնին:

02.05.2020թ. ուժի մեջ մտած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը երկու տարվա ժամկետում վերլուծում է դատավորների հայտարարագրերը:

Ստորև ներկայացվում են 31.12.2021 թվականի դրությամբ կատարված աշխատանքները՝ ըստ քանակական ցուցանիշների՝

Հայտարարատու պաշտոնատար անձանց խմբեր	Հայտարարագրերի վերլուծությունը կատարված պաշտոնատար անձանց քանակ
Սնանկության դատարանի դատավորներ	12
Վճռաբեկ դատարանի դատավորներ	17
Վերաքննիչ դատարանի դատավորներ	48
Վարչական դատարանի դատավորներ	21
Այլ պաշտոնատար անձինք	12
Բարեվարքության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների ընթացքում գույքային դրությունը ստուգված հայտարարատու պաշտոնատար անձինք	106
Ընդամենը՝	216



4.1.4 Հայտարարագրման ժամկետների ու կարգի խախտման նկատմամբ պատասխանատվությունը

Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չէ կամ ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, կամ հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ: Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու առերևույթ հատկանիշներ, ապա

վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է Գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում:

- ✓ Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի (հայտարարատու) կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

- ✓ Հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ Հանձնաժողով ներկայացնելը առաջացնում է նախազգուշացում:

- ✓ Վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին կամ ներկայացման կարգին համապատասխան չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

- ✓ Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

2021 թվականի օգոստոսի 5-ին, 6-ին, 10-ին և 23-ին Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվել են սահմանված ժամկետում հայտարարագրեր չներկայացրած պաշտոնատար անձանց՝ թվով 4 ցանկ, իսկ օգոստոսի 11-ից սկսվել է հայտարարագրեր չներկայացրած պաշտոնատար անձանց հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունենալու և 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով համապատասխան հայտարարագրերը ներկայացնելու վերաբերյալ գրավոր ծանուցումներ ուղարկելու գործընթացը:

- ✓ Հրապարակված ցանկերին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումներով՝

- ✓ Ցանկ N 1

- ✓ Ցանկ N 2
- ✓ Ցանկ N 3
- ✓ Ցանկ N 4

Հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկ 1	202
Հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկ 2	298
Հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկ 3	200
Հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկ 4	266
Հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց թվաքանակ	700
Գրավոր ծանուցում ուղարկվել է, այդ թվում՝	693
Պատշաճ ծանուցվել է	478
Պատշաճ չի ծանուցվել	215
Հայտարարագիր է ներկայացրել, այդ թվում՝	435
Պատշաճ ծանուցվել և հայտարարագիր է ներկայացրել	343
Պատշաճ չի ծանուցվել, բայց հայտարարագիրը ներկայացրել է	92
Պատշաճ ծանուցվել և հայտարարագիր չի ներկայացրել	135
Ուղարկված գրավոր ծանուցումները ետ են վերադարձվել Հանձնաժողով	66
ՎԻՎ արձանագրություն կազմելու հրավեր է ուղարկվել	32

4.1.5 Կուսակցության հաշվետվությունը, աուդիտը և կուսակցության պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման գործընթացը

2022 թվականի հունվարից Հանձնաժողովի գործառույթներից է կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը՝ ներառյալ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը: Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը, իրականացնում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Նշված գործառույթների իրականացման շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ կուսակցությունների և նրանց կոնտակտային անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում, իրազեկման միջոցառումներ, մշակվել են կուսակցության ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի ձևանմուշները, սկսվել են օրենքով սահմանված այլ ենթաօրենսդրական ակտերի և օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքները:

Կուսակցության տարեկան հաշվետվությունը, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակի կուսակցության մուտքերի, ելքերի, գույքի և պարտավորությունների վերբերյալ տեղեկություններ:

Պարտադիր աուդիտի են ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունները, եթե սահմանված մուտքերը կամ ելքերը հաշվետու տարվա ընթացքում գերազանցել են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը կամ կուսակցությունը սահմանված կարգով պետական բյուջեից պետական ֆինանսավորում է ստացել՝ անկախ հաշվետու տարում ունեցած մուտքերի կամ ելքերի չափից:

Պարտադիր աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից՝ Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: Պարտադիր աուդիտի ենթակա և պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների աուդիտի ֆինանսավորման գումարը նվազեցվում է կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությանը հատկացվող պետական ընդհանուր ֆինանսավորման գումարից:

Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները (հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր: Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր: Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը՝ բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների: Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի

անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամներն ազատվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից, եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձ:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված առավել թիրախավորված և արմատական պայքար մղելու համար առաջնային խնդիր է հանրության կողմից կոռուպցիոն բնույթի երևույթների մերժումը և կոռուպցիայից զերծ հանրային ծառայության համակարգի ձևավորումը:

Տարիներ շարունակ պետական կառավարման համակարգում արմատավորված հովանավորչությունն ու կամայականությունները, պաշտոնական դիրքի չարաշահումն ու անբարեխիղճ աշխատանքը հանգեցրել են հասարակության կողմից պետական կառավարման համակարգի նկատմամբ վստահության ճգնաժամի, պետական ծառայողի՝ որպես պետության ներկայացուցչի հանդեպ վերապահելի վերաբերմունքի: Պետական պաշտոնյան «օտարվել է» հասարակությունից՝ դառնալով հանրային ընկալման մեջ որոշակի «արտոնյալ» խավ՝ տարբերվող հասարակությունից:

Անկախ պետականության հիմնադրումից ի վեր պետական կառավարման համակարգում հանրային ծառայողի բարեվարք վարքագիծը մշտապես եղել է հասարակության քննարկման և ուշադրության ներքո: Կոռուպցիոն երևույթներն ու դրսևորումները պետական համակարգում մշտապես կապվել են պետական ծառայողների կամայական, անբարեխիղճ և անազնիվ վարքագծի հետ, որի հետևանքով էապես տուժել է հասարակությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը, հիմնովին սասանվել է հանրության վստահությունը պետության և պետական կառավարման համակարգի հանդեպ:

Հակակոռուպցիոն քաղաքականության տրամաբանության մեջ հանրային ծառայողի վարքագծի փոփոխությունը հրամայական է՝ նախապայման, որով յուրաքանչյուր պետություն կկարողանա ապահովել առաջընթաց, հետամուտ լինել հանրային շահին, նպատակային և արդյունավետ հանրային ծառայություններ մատուցել պետության առաքելությանը:

Այս ընդգրկուն նպատակին է միտված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության համակարգի և մասնավորապես՝ իբրև այդ համակարգի բաղկացուցիչ՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգի ներդրումը:

Հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգի նպատակն է ապահովել հանրային ծառայողի օրինավոր, բարեկիրթ, հարգալիր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ զերծ խտրությունից և մասնավոր շահի գերակայումից, հիմնված օբյեկտիվության և հանրային շահին հավատարմության, հանրությանը ծառայելու աներկբա գիտակցության և հաստատակամության վրա:

Իբրև այդպիսին՝ վարքագծի կանոնների միասնական համակարգը կոչված է հաստատելու հանրային ծառայողների համար էթիկայի նորմեր և վարքագծի միասնական կանոններ՝ իրենց մասնագիտական պարտականությունները պատշաճ իրականացնելու, հանրային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը ամրապնդելու, հանրությանը՝ իբրև շահառուի, պատշաճ վերաբերմունք և որակյալ հանրային ծառայություններ ստանալու համար:

Հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգի ներդրման խնդիրներն են հանրային ծառայողի կողմից բարեվարք վարքագծի ապահովումը, հանրային որակյալ ծառայության մատուցումը, հաշվետվողականությունը, աշխատանքի հանդեպ բարձր պատասխանատվությունը, ծառայողի վարկանիշի ամրապնդումը, պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ հանրության վստահության բարձրացումը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով: Նույն հոդվածի 3-րդ մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, իսկ 5-րդ մասի համաձայն՝ Քաղաքացիական ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող ՀՀ փոխվարչապետը:

Համաձայն նույն հոդվածի 7-րդ մասի՝ Հանրային ծառայողի վարքագծի կանոնները սահմանվում են վարքագծի տիպային կանոնների հիման վրա՝ կանոնագրքերով:

Օրենքը կարգավորում է նաև հանրային ծառայության այլ տեսակների համար վարքագծի կանոնների (կանոնագրքերի) ընդունման/սահմանման սկզբունքը: Այսպես, 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Այլ հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները կարող է սահմանել հանրային ծառայության տվյալ տեսակը ղեկավարող մարմինը՝ ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում: Դրանց չսահմանման դեպքում գործում են քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները»: Ընդ որում, հանրային ծառայողի վարքագծի կանոնների պահպանման կառուցակարգեր կարող են սահմանվել տվյալ ծառայության առանձնահատկությունները կարգավորող իրավական ակտերով:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը ներառում է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (Model Code for Public servants), այդ կանոնների հիման վրա սահմանված Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքերը (ինչպես քաղաքացիական ծառայության, այնպես էլ հանրային ծառայության այլ, այդ թվում՝ հատուկ տեսակների համար), ինչպես նաև Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրառման ուղեցույցը (Incorporation Guidance to Model Code):

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները վարքագծի սկզբունքներից բխող ծառայողական էթիկայի և ծառայողական վարքագծի հիմնական կանոնների ամբողջություն են, որով պետք է առաջնորդվեն հանրային ծառայողները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից: Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների նպատակն է ուղենշել և սահմանել ծառայողական վարքագծի հիմնական նորմերն ու շրջանակները, որոնք հիմք կհանդիսանան հանրային ծառայության առանձին տեսակների մասով կանոնագրքերի ստեղծման համար: Այս առումով

վարքագծի տիպային կանոնները ունիվերսալ (համապիտանի) փաստաթուղթ է, որից բխեցվելու են ոլորտային այլ կանոնագրքերը:

Նշված կանոնագրքերից հիմնականն առնչվում է պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց, որի ընդունումը, համաձայն Օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի, վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Այն վարքագծի կանոնների միասնական համակարգում ձևակերպված է իբրև Պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրք (Code of Conduct for Public and Local Officials):

Վարքագծի կանոններն օժանդակում են հանրային ծառայողներին՝ զբաղեցրած պաշտոններում իրենց ծառայողական վարքագիծը կանխատեսելու և սահմանված նորմերին համապատասխանեցնելու հարցում:

Վարքագծի կանոնների խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հանձնաժողովը՝

1) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը),

2) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը,

3) մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը. (կետեր 22, 23, 24):

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ Օրենքով սահմանված դեպքերում Հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Որպես այդպիսիք

նախատեսվում է ընդունել վերոգրյալ փաստաթղթերը՝ տիպային կանոնները, Կանոնագիրքը և Ուղեցույցը:

ՀՀ վերոնշյալ օրենքներով իրեն տրված լիազորությունների շրջանակում Հանձնաժողովը 2021 թվականի ընթացքում իրականացրել է վերը նշված փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքները: Մասնավորապես՝ հաշվետու տարվա ընթացքում մշակվել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների նախագիծը: Այդ նպատակով ուսումնասիրվել և թարգմանվել է միջազգային փորձագետի կողմից կազմված վարքագծի կանոնների նախագծը, կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, իրականացվել է ՀՀ պետական գերատեսչություններում գործող վարքագծի կանոնագրքերի բովանդակային ուսումնասիրություն, տեղի են ունեցել մի շարք աշխատանքային հանդիպումներ: Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների նախագծի կազմման և մշակման նպատակով սերտ և համակցված աշխատանքներ են իրականացվել միջազգային և տեղական փորձագետների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են նաև Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրառման ուղեցույցի նախագծի մշակման աշխատանքները:

Նշված փաստաթղթերի հաստատումից հետո նախատեսվում է կազմել և հաստատել Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը:

Տիպային կանոններից բխելու են ինչպես Հանձնաժողովի կողմից ընդունվելիք Պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, այնպես էլ հանրային այլ տեսակների համար կազմվող կանոնագրքերը:

Վերոգրյալ երեք փաստաթղթերի կազմման, մշակման և հաստատման աշխատանքները ներառված են Հանձնաժողովի 2022 թվականի գործողությունների տարեկան ծրագրում: Նշված աշխատանքներում միջազգային լավագույն փորձի ներառման, փաստաթղթերի առավել ամբողջական և հայեցակարգային բնույթն ապահովելու նպատակով Հանձնաժողովը համագործակցում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի (CoE) փորձագետների և իրավաբանների հետ:

Հանձնաժողովը ապահովում է վարքագծի կանոնների կիրառման միասնականությունը և օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ստացել է վարքագծի կանոնների վերաբերյալ դիմումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս հաստատված չեն հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը՝ Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատական տալ դիմումներում ներկայացված վարքագծի կանոնների խախտումներին:

5.2 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և շահերի բախումը

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով բարեվարքության համակարգը, ի թիվս հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ներառում է անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և շահերի բախումը: Ընդ որում, այս նորմերի ապահովումը և փաստացի կիրառումը պայմանավորված է եղել Հանձնաժողովի ստեղծմամբ, ինչն ամրագրված է թե՛ Կառավարության կողմից հաստատված Հակակուռուպցիոն ռազմավարությամբ, թե՛ Հայաստանի վերաբերյալ միջազգային զեկույցներում:

Հատկանշական է, որ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 4-րդ փուլը համընկել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏԶՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի 4-րդ փուլի գնահատման ժամանակահատվածի հետ և «Հայաստանի վերաբերյալ» զեկույցում արձանագրված նկատառումներին անդրադարձ է կատարվել Ռազմավարության շրջանակներում:

Զեկույցում համատարած կոռուպցիայի հաղթահարման համատեքստում ընդգծվում են վերջին տարիների ընթացքում Հայաստանում իրականացված բարեփոխումները՝ հակակոռուպցիոն օրենսդրության և ինստիտուտների ամրապնդման ուղղությամբ: Կարևորվում է նաև Հայաստանի կողմից քաղաքացիական ծառայության և քաղաքացիական ծառայության բարեվարքության համապարփակ իրավական շրջանակը, այդ թվում՝ էթիկայի և շահերի բախման հարցերին առնչվող իրավական կարգավորումները, ազդարարների պաշտպանության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքները: Զեկույցը, ի թիվս գրանցված

հաջողությունների, անդրադարձել է նաև բացթողումներին, որոնք պետք է տեղ գտնեն կոռուպցիայի դեմ համակարգային պայքարին ուղղված գործընթացներում/միջոցառումներում և համապատասխան մարմինների գործունեության շրջանակներում:

Հանձնաժողովը՝ որպես Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված նպատակների իրականացման համար պատասխանատու մարմին, մշտապես ուշադրության կենտրոնում է պահում Ռազմավարությամբ իրեն վերապահված, ինչպես նաև Հայաստանի վերաբերյալ զեկույցներում տեղ գտած բացթողումները և առաջարկությունները:

Այս առնչությամբ 2021 թվականին Հանձնաժողովում մեկնարկել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի մշակման աշխատանքները՝ արձանագրելու առկա օրենսդրական բացթողումները և Հանձնաժողովի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրները՝ օրենսդրական կարգավորումները բարելավելու և հանրային ծառայողներին և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող սահմանափակումները միջազգայնորեն ընդունված կարգավորումներին/չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Հայեցակարգը մշակվել է՝ հաշվի առնելով միջազգային պրակտիկայում կիրառվող համանման կարգավորումները, տարբեր երկրների փորձը, իսկ հայեցակարգի մշակման հիմքում ընկած են խնդիրները, որոնց Հանձնաժողովն առերեսվել է իր գործունեության ընթացքում:

Հայեցակարգի մշակման արդյունքում վեր են հանվել օրենսդրական այն բացերը, որոնք խոչընդոտում են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների չպահպանման դեպքում Հանձնաժողովին օրենքով վերապահված լիազորությունների իրացմանը, նման իրավիճակներին իրավաչափ գնահատական տալուն, խախտումների հայտնաբերման դեպքում պատշաճ արձագանքմանը և իրավական ընթացքի ապահովմանը:

Վարքագծի կանոնների, շահերի բախման և դրանից բխող անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են ինչպես «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ առանձին ոլորտային օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը

սահմանում է ընդհանուր կարգավորումներ բոլոր հանրային ծառայողների՝ հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար, իսկ առանձին ոլորտային իրավական ակտերը սահմանում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող հատուկ կարգավորումներ հանրային կամ հանրային ծառայության պաշտոնների կոնկրետ տեսակների համար՝ հաշվի առնելով վերջիններիս առանձնահատկությունները:

Այսպես օրինակ՝ շահերի բախումը կանխարգելող, սահմանափակող կամ շահերի բախման իրավիճակները կարգավորող նորմեր առկա են տարբեր իրավական ակտերում, սակայն դրանց ձևակերպումները ոչ միշտ են հստակ ու նույնական, ինչը խոչընդոտում է շահերի բախման միօրինակ ընկալումն ու կառավարումը:

Շահերի բախման ներկայիս սահմանումը սահմանափակում է շահերի բախման տարբեր իրավիճակներում դրանց հակազդելու հնարավորությունը, իսկ Հանձնաժողովի գործառույթների տեսանկյունից հաճախ թույլ չի տալիս արձանագրել շահերի բախում և ընթացք տալ խնդրին առնչվող դիմումներին: Հայեցակարգում անդրադարձ է արվել պետական գնումների գործընթացում շահերի բախմանը՝ նկատի ունենալով պաշտոնատար անձանց և վերջիններիս հետ փոխկապակցված ընկերությունների ակտիվ մասնակցությունը պետական մարմինների կողմից պատվիրված գնումներին, և դրանով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերին:

Ինչ վերաբերում է անհամատեղելիության պահանջներին, ապա դրանց վերաբերյալ ձևակերպումները և մոտեցումները նույնպես ոչ միանշանակ են: Այսպես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում սահմանված են ընդհանուր կարգավորումներ հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար, մինչդեռ այս կանոնից բացառություն է սահմանվել առանձին խմբերի պաշտոնատար անձանց համար, ինչը անհամատեղելիության պահանջների մեկնաբանման տեսանկյունից շփոթություն է առաջացնում: Վարքագծի կանոնների, շահերի բախման և այլ սահմանափակումների խախտման համար օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվության կիրառման տիրույթը/շրջանակը ևս խնդրահարույց է: Մասնավորապես, նշված կանոնների չպահպանման համար կարգապահական պատասխանատվությունը կիրառելի չէ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ինչի արդյունքում նշված պաշտոնատար անձանց կողմից համապատասխան խախտման դեպքերը որևէ իրավական հետևանք չեն առաջացնում:

Անհամատեղելիության պահանջների քննարկման համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև բիզնես բաժնեմասի (առևտրային կազմակերպության բաժնեմասի)

հավատարմագրային կառավարման ինստիտուտին: Ներկայումս գործող իրավակարգավորումները հիմնականում կրում են ձևական բնույթ, բովանդակային տեսանկյունից չեն լուծում ձեռնարկատիրական գործունեության և հանրային պաշտոնի անհամատեղելիության խնդիրը:

Այս և օրենսդրական այլ բացերը տեղ կգտնեն օրենսդրական փոփոխությունների նախագծում, որոնք հիմնված են լինելու միջազգային լավագույն փորձի վրա և որոնք Հանձնաժողովը նախատեսում է ներկայացնել արդեն 2022 թվականի մայիս ամսին: Օրենսդրական փոփոխությունները միտված կլինեն նաև հավատարմագրային կառավարման ինստիտուտի ներկայիս անկատարությունները վերացնելուն:

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների տեսակները

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունեն Հանձնաժողովին օրենքով վերապահված առանձին տեսակի վարույթներ իրականացնելու լիազորությունները, ինչպես նաև կոնկրետ գործերով դրանց իրացման արդյունքում կայացված որոշումներն ու եզրակացությունները:

Հանձնաժողովն օրենսդությամբ սահմանված կարգով և դեպքերում հարուցում է հետևյալ վարույթները.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված, հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ,
- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթ,
- «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված ընթացակարգային առանձնահատկությունների հաշվառմամբ Հանձնաժողովի իրավասությունների սահմաններում իրականացվող ազդարարման վարույթ,
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված, Հանձնաժողովի կողմից հարուցվող կարգապահական վարույթ,

- Անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ էթիկայի հանձնաժողովների եզրակացության վերանայման վարույթ:

Կոնկերտ գործերով վարույթների հարուցմամբ իրականացվում է արտաքին ներգործություն ունեցող վարչարարություն, որի շրջանակներում, մասնավորապես, Հանձնաժողովն առաջնորդվում է անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում գործերի քննությունն ապահովելու, վարույթի մասնակիցներին գործի նյութերին ծանոթանալու, ինչպես նաև լսված լինելու իրավունքների իրացման հնարավորության ապահովման անհրաժեշտությամբ:

Հանձնաժողովը կոնկրետ գործերով համակարգային առումով մեկնաբանում է օրենսդրական կարգավորումների բովանդակային նշանակությունը, այս առնչությամբ գործում առկա հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերը վերլուծության են ենթարկվում օրենքի ձևական և բովանադկային տեսանկյունից՝ կիրառվող նորմի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը պահպանելու նպատակով: Վարույթների արդյունքում պաշտոնատար անձանց նկատմամբ Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումներով և եզրակացություններով հաստատվում են կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից կատարված խախտումները հիմնավորող փաստեր: Նշված վարչարարությունը գործնական առումով զսպող նշանակություն ունի պարշտոնատար անձանց կոռուպցիոն բնույթի հնարավոր հակահիրավական վարքագծի կանխարգելման համար:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել են հայտարարագրմանն առնչվող, կարգապահական և անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների վերաբերյալ վարույթներ:

6.2 Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներ

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել են



հայտարարագրմանն առնչվող[2] խախտումների վերաբերյալ թվով 42 վարույթներ:

Հարուցված վարույթներից թվով 30-ը հարուցվել են հայտարարատուի կողմից հայտարարագրերը օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու, 10-ը՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, իսկ 2-ը՝ հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ ներկայացնելու խախտումների կապակցությամբ:

Նշված վարույթներից թվով 18-ը հարուցվել են հանրային պետական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ (այդ թվում՝ ԱԺ պատգամավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատախազի, քննիչների, վարչական պաշտոն զբաղեցնող անձի, ինչպես նաև հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց), ևս թվով 18-ը՝ հանրային, համայնքային պաշտոն զբաղեցնող (Երևանի վարչական շրջանի ղեկավարի տեղակալի, համայնքների ղեկավարների, ավագանու անդամների, համայնքների ղեկավարների տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց) անձանց, թվով 4-ը՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների նկատմամբ, 1-ը՝ պետական (ոստիկանության) ծառայության պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ, ևս 1-ը՝ հանրային պետական պաշտոն զբաղեցնող անձի (դատավորի) ընտանիքի անդամի նկատմամբ:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովը քննել և լուծել է (վարույթը եզրափակել է որոշմամբ) հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ 26 գործի վարույթներ, իսկ թվով 16 գործի վարույթները եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող ամիսների ընթացքում:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված թվով 2 որոշումներով հայտարարատու անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում վարչական տույժը, իսկ 8-ի նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք՝ 200.000-ական ՀՀ դրամի չափով, որոնցից 2-ի դեպքում հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու, իսկ 6-ը՝ հայտարարագրերը չներկայացնելու իրավախախտումները կատարելու համար: Տվյալ տարվա ընթացքում եզրափակված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթների արդյունքում Հանձնաժողովը կայացրել է թվով 16 որոշում գործի վարույթը կարճելու վերաբերյալ, որոնցից 8-ը հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ

[2] Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը:

ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, ևս 8-ը հայտարարագրերը չներկայացնելու խախտումների կապակցությամբ: Մասնավորապես, հայտարարագրերը չներկայացնելու խախտումների կապակցությամբ իրականացված վարույթների արդյունքում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը կարճվել են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին վարույթները:





Նշված պարագայում Հանձնաժողովի կողմից պատճառաբանվել են կայացված որոշումները՝ արձանագրելով, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, այս առնչությամբ էական է համարվել խախտման (արարքի) որակական կողմը, արդյոք այն ունի նվազ նշանակություն, թե ոչ: Նշվածով պայմանավորված՝ մինչև գործի քննության օրը հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, չի խաթարվում: Խախտման (արարքի) որակական կողմի, ինչպես նաև նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էության գնահատմամբ է Հանձնաժողովի կողմից իրականացվել վարչարարություն նաև հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու խախտումների կապակցությամբ: Այսպես, Հանձնաժողովը կոնկրետ գործով խախտումը նվազ նշանակություն ունեցող է որակել այնպիսի հանգամանքների առկայության պարագայում, երբ քննության արդյունքում եզրահանգել է, որ հայտարարագրման ենթակա տվյալը՝

- եկամուտը՝ գոյացել է բացառապես խախտում կատարած անձի աշխատանքի վարձատրությունից.
- Եկամուտը՝ ստացվել է մինչև հայտարարատու հանդիսացող անձի պաշտոնի ստանձնումը.
- խախտում կատարած անձն առաջին անգամ է ներկայացրել պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր:

6.3 Կարգապահական վարույթներ

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթներ[3] են հարուցվել Բարձրագույն դատական խորհրդի 3 անդամների (Ա. Մխիթարյան, Վ. Քոչարյան, Ռ. Վարդազարյան) նկատմամբ, որոնցից երկուսի դեպքում (Ա. Մխիթարյան, Վ. Քոչարյան)՝ հայտարարագրերի լրացման կարգի խախտման կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու

[3] Հանձնաժողովը հանդիսանում է կարգապահապան վարույթ հարուցող մարմին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված *վարքագծի կանոնների խախտման հիմքով*, այն է՝ օրենքով սահմանված կարգով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր չներկայացնելու և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու դեպքում, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է Բարձրագույն դատական խորհուրդը:

հիմքով, մյուսի դեպքում (Ռ. Վարդազարյան)՝ Հանձնաժողովին հայտարարատու պաշտոնատար անձի գույքի փոփոխությունը հաստատող պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու հիմքով:

Այսպես, Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 12-ին Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ հարուցված թիվ ԿՎ/01/2021 կարգապահական վարույթով, մասնավորապես, արձանագրել է, որ հայտարարատուն «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» բաժնում հայտարարագրել է 564,469.90 ՀՀ դրամով պակաս դրամական միջոց: Արձանագրել է նաև, որ հայտարարատուն «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի «Բ.4. Հանձնված և վերադարձված փոխառություններ, բանկային ավանդներ» բաժնում հանձնված փոխառության գումարը տարեսկզբի դրությամբ ներկայացրել է 8,175,886.00 ՀՀ դրամ՝ 2,279,000.00 ՀՀ դրամի փոխարեն, իսկ տարեվերջի դրությամբ 8,175,886.00 ՀՀ դրամ 10,454,886.00 ՀՀ դրամի փոխարեն, այսինքն՝ 2,279,000.00 ՀՀ դրամով պակաս:

Հանձնաժողովը, հաշվի առնելով հայտարարատուի կողմից ներկայացված պարզաբանումը, ինչպես նաև ուսումնասիրելով ներկայացված բանկային քաղվածքները, արձանագրել է, որ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հանձնած բոլոր փոխառությունները հայտարարագրվել են, սակայն ներկայացվել են հայտարարագրերի լրացմանը ներկայացվող պահանջների խախտմամբ:

Նշված գործով Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 9-ին ՎԻՎ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտման համար ընդունել է նաև «Վարչական տույժ կիրառելու մասին» թիվ ՎԻՎ/02/21 որոշումը:

Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 12-ին Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ հարուցված թիվ ԿՎ/02/2021 կարգապահական վարույթով, մասնավորապես, արձանագրել է, որ հայտարարատուն «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» բաժնում հայտարարագրել է 266,120 ՀՀ դրամ պակաս դրամական միջոց: Արձանագրել է նաև, որ հայտարարատուն «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդներ) բաժնում չի հայտարարագրել բանկային հաշվին առկա 1,383.97 եվրո:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով բանկային քաղվածքները, ստացել է ստույգ տվյալ 2018 թվականի տարեվերջին հայտարարատուի բանկային հաշիվներին առկա դրամական միջոցի չափի վերաբերյալ: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված հայտարարագրերի լրացմանը ներկայացվող պահանջներով դրամական միջոցների առանձնացումը կանխիկ և անկանխիկ՝ բանկային հաշվին առկա, դրամական միջոցների, նպատակ է հետապնդել ապահովել հայտարարագրված դրամական միջոցների հավաստիության, դրանց ծագման օրինականության, ինչպես նաև հետագայում դրանց տնօրինման օրինականության նկատմամբ Հանձնաժողովի արդյունավետ վերահսկողությունը: Հանձնաժողովը միաժամանակ արձանագրել է, որ կանխիկ և անկանխիկ դրամական միջոցներն առանձնացված տարբերակով հայտարարագրելու պահանջն առաջին անգամ կիրառվել է 2020 թվականից՝ 2019 թվականի տարեկան հայտարարագրերի նկատմամբ: Այնուամենայնիվ, հայտարարատուի կողմից «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում տարեվերջին առկա դրամական միջոցների չափը չպետք է տարբեր լինի 2019 թվականի տարվա սկզբին առկա կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների հանրագումարից: Այն դեպքերում, երբ արձանագրվում է նման տարբերություն, Հանձնաժողովի խնդիրն է պարզել, թե արդյոք այդ տարբերությունը հանդիսանում է դրամական միջոցների սխալ չափով հայտարարագրման արդյունք, թե դրամական միջոցների ընդհանուր չափը ճիշտ է, սակայն այն հայտարարագրվել է ոչ ճիշտ ենթաբաժնում:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ Հանձնաժողովը հիմնավոր է համարել հայտարարատուի պարզաբանումը՝ արձանագրելով, որ գործում առկա փաստերը վկայում են, որ դրամական միջոցների ընդհանուր գումարը հայտարարագրվել է ճիշտ չափով, սակայն այն հայտարարագրվել է լրացմանը ներկայացվող պահանջների խախտմամբ, առանց տարբերակելու կանխիկ և անկանխիկ դրամական միջոցները:

Նշված գործով Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 18-ին ՎԻՎ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտման համար ընդունել է նաև «Վարչական տույժ կիրառելու մասին» թիվ ՎԻՎ/01/21 որոշումը:

Մեկ այլ գործով՝ Հանձնաժողովին հայտարարատու պաշտոնատար անձի գույքի փոփոխությունը հաստատող պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու հիմքով Հանձնաժողովի կողմից 2021 թվականի մարտի 12-ին Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ հարուցված թիվ ԿՎ/03/2021 կարգապահական վարույթով Հանձնաժողովը, մասնավորապես, նշել է, որ Բարձրագույն դատական

խորհրդի անդամի (նախագահի) կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում 2020 թվականի սեպտեմբերի 29-ի գրությամբ հայցվել է պարզաբանում՝ հայտնաբերված և արձանագրված հայտարարագրման ենթակա տվյալների առերևույթ անհամապատասխանությունների առնչությամբ:

2020 թվականի հոկտեմբերի 23-ի գրությամբ հայտարարատու պաշտոնատար անձը բարձրացրել է որոշակի հարցեր՝ նշելով, որ պարզաբանման ենթակա հարցերի առնչությամբ պատասխանները ներկայացված հիմնավորումներով չեն տրամադրվում: Հանձնաժողովը հայտարարատուին է ներկայացրել բարձրացված հարցերի վերաբերյալ հիմնավորված պատասխաններ:

2020 թվականի դեկտեմբերի 30-ի գրությամբ Հանձնաժողովը կրկին դիմել է հայտարարատուին՝ հայցելով մինչև 2021 թվականի հունվարի 13-ը ներկայացնել հայտարարագրերի վերլուծության արդյունքների վերաբերյալ պարզաբանումներ: 2021 թվականի հունվարի 12-ին Հանձնաժողով է մուտքագրվել հայտարարատու պաշտոնատար անձի գրությունը, որով վերջինս հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից իրեն ուղղված նամակներն իր կողմից ընդունվել են ի գիտություն:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 9-րդ և 9.1-րդ մասերը՝ Հանձնաժողովը Բարձրագույն դատական խորհրդի անդամի (նախագահի) հայտարարագրերի վերլուծության արդյունքները և դրանց առնչվող նյութերն ուղարկել է Գլխավոր դատախազություն, վերջինիս նկատմամբ հարուցվել է նաև կարգապահական վարույթ:

Վերոնշյալ կարգապահական վարույթների գործերով Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 148-րդ հոդվածով սահմանված կարգով, Բարձրագույն դատական խորհրդին թվով 3 միջնորդություններ է ներկայացրել կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Հանձնաժողովը նշված միջնորդություններով վկայակոչել է ոչ միայն ներպետական օրենսդրությունում առկա իրավակարգավորումները, այլև՝ միջազգային փաստաթղթերում առկա պահանջները:

Այսպես, 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9 (17), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին: Նույն կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը զարգացող միտում է և նպատակ ունի հասցեագրել շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները (տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Հոդված 11-ի կիրառական ուղեցույց և գնահատման շրջանակ», կետ 44[4]):

Գույքային դրության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացումը Վենետիկի հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման գործում դիտարկվել է որպես արժեքավոր զենք (տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) CDL-AD (2014) 008, 24 մարտի, 2014 կարծիք No. 712 / 2013): Կարևորելով ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը՝ Վենետիկյան հանձնաժողովն անդրադարձել է նաև ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարման դեպքում պատասխանատվությանը և դրա համաչափությանը: Ըստ Վենետիկյան հանձնաժողովի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար, սակայն հայտարարագիր չներկայացնելը բավարար լուրջ խախտում է, և կարող է հանգեցնել պաշտոնից ազատման (Վենետիկյան հանձնաժողով CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

4 https://www.unodc.org/res/ji/import/programmes_projects_initiatives/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide.pdf

Հանձնաժողովի վերոնշյալ միջնորդությունների քննության արդյունքում կայացվել են թիվ ԲԴԽ-36-Ո-Կ-13, ԲԴԽ-36-Ո-Կ-14 , ԲԴԽ-38-Ո-Կ-16 որոշումները: Բարձրագույն դատական խորհուրդն իր որոշումներով երկու գործով կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը, մեկի դեպքում միջնորդությունը մերժել է:

6.4 Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ վարույթներ

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ հարուցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով[5] նախատեսված թվով 3 վարույթներ: Նշված վարույթների հարուցման համար հիմք են հանդիսացել լրատվամիջոցների հրապարակումների, ինչպես նաև պետական մարմնից ստացված գրության ուսումնասիրությամբ վեր հանված այնպիսի առերևույթ խախտումները, որոնք վերաբերում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքներին:

Անհամատեղելիության առերևույթ խախտումների վերաբերյալ վարույթների շրջանակում Հանձնաժողովի կողմից համակարգային առումով վերլուծվել և ներկայացվել են անհամատեղելիության պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների բովանդակային նշանակությունը, այս առնչությամբ Հանձնաժողովը, մասնավորապես, արձանագրել է, որ օրենսդիրը ոչ միայն նախատեսել է հստակ ժամկետ, որի ընթացքում հնարավոր կլինի առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը հանձնել հավատարմագրային կառավարման, այլև տվյալ հնարավորությունը սահմանափակել է անձի՝ հանրային կամ հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու (ընտրվելու) դեպքով: Նշել է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվի երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և երբ պաշտոնի նշանակելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

---

[5] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումներով Հանձնաժողովն իրականացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների առերույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ, որոնց հարուցման համար հիմք են հանդիսանում հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ հայտնաբերելու դեպքերը, լրատվամիջոցների հրապարակումները, անձանց գրավոր դիմումները:

Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցության արգելքը բացարձակ է, ինչը ենթադրում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի բոլոր գործողություններից, որոնց շրջանակում կարող է ձևավորվել այնպիսի վարքագիծ, որը կարող է որակվել որպես պետական պաշտոնին զուգահեռ անձի մասնակցության ու ազդեցության պահպանում այլ պաշտոնում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը: Ընդգծել է նաև, որ հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար լրացուցիչ երաշխիք է սահմանել, որի արդյունքում անձինք հնարավորություն կունենան պաշտոնի նշանակվելուց կամ ընտրվելուց հետո մեկամսյա ժամկետում վերացնելու իրենց զբաղեցրած պաշտոնի հետ անհամատեղելի այլ գործունեությունը՝ դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները:

Անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտումների առնչությամբ Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքում էական է համարում գնահատել, թե որքանով է պահպանվում պաշտոնատար անձի ազդեցությունը առևտրային կազմակերպության գործունեության վրա, և թե այդ ազդեցությունն ինչպես է դրսևորվում կամ ինչպես կարող է դրսևորվել:

Այսպես, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի նկատմամբ հարուցված վարույթի շրջանակներում պարզված տեղեկությունների հիման վրա գործով հաստատված փաստերի նկատմամբ կիրառելի իրավական նորմերի բովանդակային վերլուծությամբ, Հանձնաժողովի կողմից, մասնավորապես, արձանագրվել է այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձն առևտրային կազմակերպության միակ մասնակիցն է դարձել հանրային պաշտոն զբաղեցնելու ընթացքում, մինչդեռ օրենսդրական կարգավորումներից բխում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվի երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և, երբ պաշտոնի նշանակելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման: Տվյալ գործով Հանձնաժողովը փաստել է նաև, որ նույնիսկ այն դեպքում, երբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հանձնվել է հավատարմագրային կառավարման, պաշտոնատար անձի հնարավոր ազդեցությունը

կոնկրետ առևտրային կազմակերպության գործունեության վրա չի չեզոքացվել, քանի որ պաշտոնատար անձի և առևտրային կազմակերպության միջև կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրով կազմակերպության միակ մասնակիցն իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասը հանձնել է կառավարչի՝ նույն կազմակերպության կառավարմանը, որի անունից հանդես է եկել կազմակերպության տնօրենը, որը նշանակվել է պաշտոնատար անձի կողմից:

Հանձնաժողովը, նշված գործով իրականացնելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, ըստ էության փաստել է, որ Գ. Խանդանյանը մինչև իրեն պատկանող բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելը հանդես է եկել անձամբ և որպես առևտրային կազմակերպության միակ մասնակից կայացրել է որոշում կազմակերպության կանոնադրությունում մասնակիցների կազմի հետ կապված փոփոխություններ կատարելու, գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու, կազմակերպության գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու և փոփոխությունները գրանցելու համար լիազոր մարմին դիմում ներկայացնելու վերաբերյալ, որով փաստացի իրականացրել է առևտրային կազմակերպության կառավարմանն ուղղված գործառույթներ:

Արդյունքում 2021 թվականի հուլիսի 26-ին կայացված եզրակացությամբ Հանձնաժողովը հաստատել է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Խանդանյանն իր գործողություններով խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի (մարզպետի) նկատմամբ հարուցված վարույթի շրջանակներում ի թիվս անհամատեղելիության պահանջներ սահմանող ընդհանուր կարգավորումների, Հանձնաժողովի կողմից վերլուծության առարկա է դարձել նաև Սահմանադրությամբ ամրագրված Կառավարության անդամին («Տարածքային կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավանորմի ուժով՝ նաև մարզպետին) ներկայացվող պահանջի բովանդակությունը, որի համաձայն՝ Կառավարության անդամը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում: Սահմանադրության նշված սահմանափակումից ենթադրվում է, որ Կառավարության անդամի պաշտոնը նրա աշխատանքային գործունեության միակ տեսակն է, աշխատում է պրոֆեսիոնալ հիմունքներով և դրան

զուգահեռ նա չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված այլ պաշտոն: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելու՝ կառավարության անդամի նկատմամբ նախատեսված արգելքը բխում է իշխանությունների բաժանման սկզբունքից և սահմանադրական այն դրույթից, որի համաձայն նշված մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով, ինչպես նաև մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից, ըստ որի՝ Կառավարության անդամը չի կարող կատարել այլ վճարովի աշխատանք:

Տվյալ գործով 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հանձնաժողովի որոշմամբ վարույթը կասեցվել է՝ հաշվի առնելով այն, որ Հանձնաժողովի մոտ ձևավորվել էր հիմնավոր կասկած առ այն, որ վարույթում առկա որոշ նյութեր չեն կազմվել 10.12.2020 թվականին, այլ կազմվել են միայն Հանձնաժողովում հարուցված վարույթից հետո՝ նպատակ ունենալով չեզոքացնելու անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտումները: 2021 թվականի սեպտեմբեի 29-ին ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում առերևույթ կեղծ փաստաթուղթ պատրաստելու և օգտագործելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է: Հանձնաժողովը սահմանված կարգով վերսկսել է վարույթը:

Տվյալ գործով պարզման ենթակա հանգամանքներով պայմանավորված՝ Հանձնաժողովը, մասնավորապես, անդրադարձել է իրավաբանական անձանց պետական գրանցման, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանում գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմերի պահանջներին, ըստ այդմ՝ արձանագրելով, որ գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները փաստացի դադարեցրած ֆիզիկական անձը չի հանդիսանում իր՝ պաշտոնից ազատման կապակցությամբ Պետական ռեգիստր տվյալներ ներկայացնելու և միասնական գրանցամատյանում համապատասխան գրառումն ապահովելու պարտականություն կրող սուբյեկտ:

Նշված կարգավորումների կիրառմամբ գնահատելով տվյալ վարույթում էական նշանակություն ունեցող փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ անձը, ստանձնելով հանրային պաշտոն, կատարել է անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավանորմերի պահպանմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ, այն է՝ դիմում է ներկայացրել իր պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն հանդիսացող

առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնից ազատվելու համար, արդյունքում Ընկերության միակ մասնակցի որոշմամբ, որպես Ընկերության գործադիր մարմնի ղեկավար դադարեցվել են վերջինիս լիազորությունները: Վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով հաստատվում է նաև Ռ. Թևոյանի՝ որպես վարձու աշխատողի, Ընկերության տնօրենի պաշտոնից ազատված լինելու հանգամանքն առ այն, որ վերջինիս համար Պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին հայտ, ինչպես նաև նշված ժամանակահատվածում չեն հաշվարկվել և վճարվել աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ:

Հանձնաժողովը նշել է նաև, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի (մարզպետի) կողմից Ընկերության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու հանգամանքը պարզելուն ուղղված Հանձնաժողովի գործողությունների արդյունքում ձեռք բերված նյութերում առկա չէ որևէ փաստական հիմք, որով կհաստատվեր վերջինիս կողմից Ընկերության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու հանգամանքը: Մասնավորապես, պետական մարմիններից և կազմակերպություններից ձեռք բերված տվյալներով Հանձնաժողովը հավաստիանում է, որ Ռ. Թևոնյանի անունից հարկային հաշվարկներ չեն ստորագրվել կամ ներկայացվել, առկա չեն վերջինիս կողմից Ընկերության անունից հանդես գալու համար տրված լիազորագրեր, կնքված անշարժ գույքի հետ կապված գործարքներ, աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև ընդունված աշխատանքից ազատման կամ ընդունման մասին անհատական իրավական ակտեր (հրամաններ):

Արդյունքում, 2021 թվականի հոկտեմբերի 18-ին կայացված եզրակացությամբ, Հանձնաժողովը հաստատել է, որ տվյալ վարույթում քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձը (մարզպետը) իր գործողություններով պահպանել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Համայնքի ղեկավարի նկատմամբ հարուցված վարույթի շրջանակներում Հանձնաժողովը, մասնավորապես, գնահատման առարկա դարձնելով պաշտոնատար անձի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Ընկերության 100% բաժնեմասը վարույթի ընթացքում հավատարմագրային կառավարման հանձնելու վարքագիծը, նշել է, որ պաշտոնատար անձանց նկատմամբ անհամատեղելիության պահանջներ ամրագրող իրավանորմերով սահմանված ձեռնարկատիրական

գործունեությամբ զբաղվելու արգելքը կրում է իմպերատիվ և շարունակական (չընդհատվող) բնույթ: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որոշակի ժամանակում արդեն իսկ դրսևորել է անգործություն (հանդիսանալով առևտրային կազմակերպության մասնակից՝ բաժնեմասը չի հանձնել հավատարմագրային կառավարման)՝ չպահպանելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք սահմանող իրավանորմը՝ հանդիսանում է անհամատեղելիության պահանջների խախտում թույլ տված անձ՝ անկախ այն հանգամանքից, որ կոնկրետ պահի բաժնեմասը, այնուամենայնիվ, հանձնում է հավատարմագրային կառավարման:

Արդյունքում, 2021 թվականի սեպտեմբերի 17-ին կայացված եզրակացությամբ[6] Հանձնաժողովը հաստատել է, որ համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձը խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Վերոնշյալ վարույթների արդյունքում ընդունված եզրակացությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով ուղարկվել են տվյալ հանրային պաշտոնը զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու իրավասություն ունեցող մարմիններ: Համայնքի ղեկավարի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքում ընդունված համապատասխան եզրակացությունը, ինչպես նաև վարույթի նյութերն ուղարկվել են համայնքի ավագանուն: Ավագանու կողմից քննարկվել և Հանձնաժողովին է ներկայացվել տեղեկատվություն այն մասին, որ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարել են վերջինիս լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքում ընդունված համապատասխան եզրակացությունը, ինչպես նաև վարույթի նյութերն ուղարկվել են Բարձրագույն դատական խորհուրդ:

Բարձրագույն դատական խորհուրդը, քննության առնելով Հանձնաժողովի՝ դատավորի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ եզրակացությունը և վարույթի նյութերը, իր կողմից 2021 թվականի հոկտեմբերի 4-ին կայացված որոշմամբ դադարեցրել է պաշտոնատար անձի լիազորությունները՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու հիմքով:

[6] http://cpcarmenia.am/files/legislation/502.pdf https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf

6.5 Վարույթների արդյունքում կայացված վարչական ակտերի բողոքարկումը

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում բողոքարկվել է թվով մեկ վարչական ակտ, որը Հանձնաժողովը կայացրել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված գործի քննության արդյունքում: Տվյալ գործով վարչական պատասխանատվության է ենթարկվել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ընտանիքի անդամը՝ նույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում թույլ տալու, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիրը չներկայացնելու համար:

Հայցվոր կողմը Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչելու իր պահանջը հիմնավորող փաստարկ է դիտարկել, մասնավորապես, այն հանգամանքը, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ «օրենքի գործողության ոլորտը» վերտառությամբ 2-րդ հոդվածով սահմանված է, որ այն տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա, հետևաբար նույն օրենքից բխող պարտավորություններն իր վրա չեն կարող տարածվել: Հանձնաժողովն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանով, ամբողջությամբ առարկել է հայցվորի պահանջի դեմ՝ ներկայացնելով իր առարկությունը հիմնավորող իրավական դիրքորոշումներ: Հանձնաժողովի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումով, մասնավորապես, ներկայացվել է հետևյալը.

Հայցվորի այն փաստարկը, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածով հստակ սահմանված է օրենքի գործողության ոլորտը, որի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա, հետևաբար օրենքից բխող պարտավորություններն իր վրա չեն կարող տարածվել, հիմնավոր չեն՝ հետևյալ իրավական հիմքերով և հիմնավորումներով.

«Հանրային ծառայության մասին» օրենքի ՝ ընդհանուր դրույթներ պարունակող 1-ին հոդվածով սահմանված է օրենքի կարգավորման առարկան, որն ի թիվս այլ

իրավահարաբերությունների ներառում է նաև գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

Ընդ որում, «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորման առարկայում օրենսդիրը, ի տարբերություն այլ եզրույթների, որոնցից ակնհայտ բխում է, որ Օրենքով սահմանվում են հանրային ծառայողի հիմնական իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, պաշտոնների առանձնահատկությունները, բարեվարքության համակարգը, գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման հետ կապված հարաբերություններն առանձնացրել է կոնտեքստից՝ այդպիսով դրանք չկապելով միայն հանրային ծառայողների հետ: Որպես օրինակ՝ «Հարկային ծառայության մասին» օրենքի «Օրենքի գործողության ոլորտը» վերտառությամբ հոդվածը սահմանում է, որ օրենքի գործողությունը տարածվում է հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հարկային ծառայության պաշտոնների վրա: Այդուհանդերձ, նշված օրենքով սահմանվում են նաև հարկային ծառայողի ընտանիքի անդամներին պատկանող գույքին պատճառված վնասը պետական բյուջեից լրիվ ծավալով հատուցելու վերաբերյալ հարաբերությունները (տե՛ս հոդված 37): Նույն կերպ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածը, սահմանելով օրենքի գործողության ոլորտը, նշում է, որ սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների և դրանցում դիվանագիտական պաշտոններ և դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց (այսուհետ՝ դիվանագետ) վրա, սակայն տվյալ օրենքի 45-րդ և 46-րդ հոդվածներով սոցիալական երաշխիքներ են սահմանվում նաև դիվանագետների ընտանիքի անդամների համար: Նույնաբովանդակ նորմեր նախատեսված են նաև «Համայնքային ծառայության մասին» օրենքով: Ավելին, ծառայության այլ տեսակները սահմանող օրենքներում[7], որոնցում բացակայում են «Օրենքի գործողության ոլորտը» վերտառությամբ հոդվածները և նմանատիպ կարգավորումները, սահմանվում են «օրենքի կարգավորման առարկան» հոդվածի ներքո, տառացի մեկնաբանության դեպքում օրենքները կարգավորում են բացառապես համապատասխան ծառայողներին առնչվող իրավահարաբերությունները, այնինչ օրենքների առանձին հոդվածներում իրավունքներ և պարտականություններ են սահմանված նաև վերջիններիս ընտանիքի անդամների համար:

[7] «Ոստիկանությունում ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» և մի շարք այլ Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայցվորի մեկնաբանությամբ որդեգրված տրամաբանության դեպքում վերոնշյալ պետական ծառայողների ընտանիքի անդամների համար համապատասխան իրավանորմերով սոցիալական երաշխիքների նախատեսումը ևս իրավաչափ չէ, քանի որ նրանց ուղղակիորեն առնչվող կարգավորումներ նախատեսված չեն օրենքների գործողության ոլորտը կամ կարգավորման առարկան սահմանող ընդհանուր դրույթներում: Այս առումով հարկ է արձանագրել, որ ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները նշված օրենքներով սահմանելը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես Օրենքի կարգավորման առարկայից դուրս նորմերի նախատեսում, քանի որ նշված սոցիալական երաշխիքները չէին տրամադրվի անձանց, եթե նրանք չլինեին Օրենքներով սահմանված ծառայողների ընտանիքի անդամներ: Նույն տրամաբանությունն ընկած է նաև հայտարարագրման համակարգի հիմքում: Այսպես, Օրենքով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ծագում է նշված անձանց համար բացառապես այն հիմքով, որ վերջիններս հանդիսանում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի ընտանիքի անդամներ:

Խնդրո առարկա հոդվածը, ինչպես նաև ծառայությունների տեսակները կարգավորող այլ օրենքների նույնաբովանդակ հոդվածները սահմանելիս օրենսդիրը ոչ թե նպատակ է ունեցել նախատեսելու օրենքի գործողության օբյեկտ հանդիսացող անձանց սպառիչ շրջանակը, այլ, հաշվի առնելով ծառայությունների առանձնահատկությունները և նորմերի հնարավոր բախումները, հստակեցրել է, թե առանձին տեսակի ծառայությունը սահմանող օրենքը ո՛ր ծառայողների նկատմամբ է կիրառվում:

Ավելին, «Հանրային ծառայության մասին» օրենքի հիմնական մաս կազմող «Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրումը» վերտառությամբ 6-րդ գլուխում սահմանված են հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմեր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է նորմատիվ իրավական ակտ հասկացությունը, որի համաձայն այն բնորոշվում է անորոշ թվով անձանց համար վարքագծի պարտադիր կանոններ պարունակելու հատկանիշով: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է հիմնական մաս, որում շարադրվում են իրավական նորմերը:

Նշվածից հետևում է, որ նորմատիվ իրավական ակտի հիմնական մասում են սահմանվում այն իրավական նորմերը (վարքագծի կոնկրետ կանոնները), որոնք ունեն

մշտական բնույթ, նախատեսված են բազմակի կիրառման համար և պարտադիր են անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար:

Տվյալ պարագայում «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով սահմանված են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը:

Այսպես, նշված օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, որոնցում «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ ներառված են նաև ինքնավար պաշտոն հանդիսացող առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնը զբաղեցնող անձինք: Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակում ներառված են նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները:

Վերոնշյալից հետևում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված իրավանորմերով սահմանված են վարքագծի պարտադիր կանոններ, որոնց համաձայն հայցվորը՝ որպես առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնը զբաղեցնող անձի ընտանիքի չափահաս անդամ, կրում է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնելու պարտականություն:

Տվյալ դատական գործով ներկայացված հայցի առարկայի վերաբերյալ դեռևս ձևավորված չէ դատական պրակտիկա, գործով նշանակված է դատաքննություն և դեռևս առկա չէ գործն, ըստ էության, լուծող դատական ակտ:

Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթների արդյունքում ընդունված եզրակացությունները դրանց հասցեատերերի կողմից չեն վիճարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի հատուկ վարույթի շրջանակում:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախկին դատավոր Գ. Խանդանյանը 2021 թվականի դեկտեմբերի 10-ին դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան: Դիմումատուն, մասնավորապես, գտնում է, որ ինչպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ, այնպես էլ Բարձրագույն

դատական խորհրդի որոշմամբ կիրառված «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ դրույթները հակասում են Սահմանադրությանը: Այսպես, դիմումատուն, մասնավորապես, նշել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետում օգտագործված «որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը» ձևակերպումն այնչափ անորոշ է, որ հնարավորություն է տալիս նույնիսկ ընկերության բաժնեմասի սեփականության իրավունքի իրականացմանն ուղղված գործողությունները որակել որպես ներկայացուցչական, կարգադրիչ և կառավարման գործառույթների իրականացում: Նշել է նաև այն, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ, թե դատավորն ընկերության բաժնեմաս ձեռք բերելուց հետո դրա նկատմամբ սեփականության իրավունքն ինչ կարգով պետք է իրականացնի, որն էլ չի համարվի անհամատեղելիության պահանջի խախտում:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Գագիկ Խանդանյանի անհատական դիմումի ընդունելիության վերաբերյալ» թիվ ՍԴԴԿՈ-91 որոշմամբ դիմումն ընդունվել է քննության: Նշված գործի շրջանակներում որոշվելու է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի, այդ թվում նաև՝ նույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը:

Հանձնաժողովը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցող մարմին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման հիմքով, այն է՝ օրենքով սահմանված կարգով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր չներկայացնելու և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու դեպքում, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է Բարձրագույն դատական խորհուրդը:

[8]:

Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահով ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» և Հայաստանի Հանրապետության մի շարք այլ օրենքներով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

7.1 Հանձնաժողովի կողմից քննվող դիմումների տեսակները

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի՝ Հանձնաժողովը՝

- քննում և լուծում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց (բացառությամբ պատգամավորների, դատավորների և դատախազների) էթիկայի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ,
- իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ),
- համապատասխան մարմինների էթիկայի հանձնաժողովներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների

[8] http://cpcarmenia.am/files/legislation/478.pdf http://cpcarmenia.am/files/legislation/526.pdf http://cpcarmenia.am/files/legislation/502.pdf https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf https://www.concourt.am/decision/decisions/6218c77944258_sdav-45.pdf http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative https://www.concourt.am/decision/decisions/620219360fc6a_sddkv-91.pdf

վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն,

- ներկայացնում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց (բացառությամբ պատգամավորների, դատավորների և դատախազների) էթիկայի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ,
- մեկնաբանում է սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ հարուցում է վարույթ՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա,

2) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա,

3) Հանձնաժողովի նախաձեռնությամբ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում:

7.2 Հանձնաժողովի ուսումնասիրած դիմում-գրությունները և մամուլի հրապարակումները

Հանձնաժողովը 2021 թվականին իր լիազորությունների շրջանակներում շարունակել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից (բացառությամբ պատգամավորների, դատավորների և դատախազների) էթիկայի՝ օրենքով սահմանված կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի ուսումնասիրությունը և վերջիններիս հիմքով վարույթների հարուցումը/ իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է 46 դիմում, գրություն և մամուլի հրապարակում՝ վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հանձնաժողովին են հասցեագրվել թվով 5 գրություն՝ վարքագծի կանոնների, շահերի

բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ, որոնց առնչությամբ տրամադրվել են պարզաբանումներ պատասխան գրությունների տեսքով:

Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից 11-ը վերաբերել են վարքագծի կանոններին, 10-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 4-ը՝ շահերի բախմանը, 3-ը՝ այլ սահմանափակումներին: Ստացված դիմումներից 4-ը Հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, մեկը՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին, ևս մեկ դիմում վերահասցեագրվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

Վերահասցեագրված դիմումներում առկա չեն եղել օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների առերևույթ խախտումների կամ իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքեր, և դրանց առարկան դուրս է եղել Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից: Վարքագծի կանոններին վերաբերելի մյուս դիմումների առնչությամբ Հանձնաժողովն իրականացրել է դիմումների առարկաների ուսումնասիրություն և տրամադրել պարզաբանում, սակայն վարքագծի հաստատված կանոնների բացակայությամբ պայմանավորված՝ հնարավորություն չի ունեցել գնահատական տալ առանձին իրավիճակների: Վարքագծի կանոններին վերաբերող դիմումներից ուշադրության են արժանի հետևյալները՝

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից Հանձնաժողովը ստացել է գրություն, որով ներկայացվել են հանրային ծառայողների և հանրային պաշտոններ զբաղեցնող մի շարք անձանց կողմից իրենց հրապարակային խոսքում, մասնավորապես՝ սոցիալական ցանցերում կատարվող գրառումներում վիրավորանքներ և բռնության կոչեր կատարելու կամ նմանատիպ դրսևորումներին հրապարակայնորեն սատարելու դեպքեր:

Գրությամբ ներկայացված հարցի առնչությամբ Հանձնաժողովը ներկայացրել է իր դիրքորոշումը, որով խստորեն դատապարտել է հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից, առավել ևս՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ատելության խոսքի, բռնության, սպառնալիքների և վիրավորանքի ցանկացած դրսևորում, ինչպես նաև նմանատիպ դրսևորումներին հրապարակային սատարելու ցանկացած վարքագիծ: Միաժամանակ Հանձնաժողովը հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից մշակվում են հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական

խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը: ՄԻՊ գրությամբ բարձրացված խնդիրները նկատի են առնվել Հանրային ծառայողների տիպային կանոնների նախագծման աշխատանքներում:

2. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից Հանձնաժողով է ներկայացվել դիմում, որով, իր լիազորությունների դադարեցման հետ կապված, վերջինս խնդրել է ապահովել օրենքով նախատեսված միջոցներ՝ պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվության հարցը լուծելու նպատակով: Հանձնաժողովը պարզաբանել է, որ ներկայացված գրության առարկան դուրս է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից:

3. Մեկ այլ դեպքում քաղաքացու կողմից Հանձնաժողովին դիմում է ներկայացվել Պետական վերահսկողական ծառայության թափուր հաստիքի համար հայտարարված մրցույթի ժամանակ ծառայության ղեկավարի կողմից իր հասցեին հնչեցված ոչ պատշաճ արտահայտության վերաբերյալ, ինչի կապակցությամբ հայցվել է Հանձնաժողովի գնահատականը: Տվյալ դեպքում նույնպես վարքագծի հաստատված կանոնների բացակայությունը թույլ չի տվել Հանձնաժողովին՝ անձի արարքին տալ համապատասխան որակում:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների վերաբերյալ տրամադրվել է 10 պաշտոնական պարզաբանում, որոնք հիմնականում վերաբերել են հանրային պաշտոնին զուգահեռ այլ վճարովի աշխատանքների կատարմանը կամ որևէ այլ հանրային կամ համայնքային պաշտոն զբաղեցնելուն: Ստացված դիմումներից դիտարկման առավել արժանի են հետևյալները.

1. ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը Հանձնաժողովից պարզաբանում է հայցել առ այն, թե արդյոք քաղաքացիական ծառայողի կարգավիճակ ունեցող՝ տեսչական մարմնի վարչության տեսուչը իրավունք ունի «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ում համատեղությամբ զբաղեցնելու լաբորանտի պաշտոն՝ ստանալով դրա դիմաց աշխատավարձ: Դեպքի առնչությամբ Հանձնաժողովը պարզաբանել է, որ թեև լաբորանտն իր գործունեության ընթացքում կարող է կիրառել գիտական տարատեսակ մեթոդներ, սակայն դա գիտական աշխատանքի իրականացում չէ: Ավելին, գիտական աշխատանքի նպատակը որոշակի գիտական նորույթ ներկայացնելն է, մինչդեռ լաբորանտի աշխատանքն իր բնույթով հետազոտական գործունեություն է՝ հիմնված

արդեն իսկ եղած տվյալների ուսումնասիրության և վերլուծության վրա, ինչը չի կարող մեկնաբանվել իբրև գիտական գործունեություն:

2. Մեկ այլ դեպքում ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը դիմել է Հանձնաժողովին՝ քաղաքացիական ծառայողի կողմից համատեղությամբ՝ վճարովի հիմունքներով ՍՊ ընկերությունում ճարտարապետական շինությունների նախագծման աշխատանքներ իրականացնելու հարցը քննարկելու համար: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրակացրել է, որ առանձին մասնավոր ընկերությունում աշխատելը և ընկերության կողմից հեղինակվող ճարտարապետական շենքերի, հուշահամալիրների, այգեպուրակների նախագծման աշխատանքներին մասնակցելը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով չի համարվում ստեղծագործական աշխատանք, ուստի վերջինս քաղաքացիական ծառայության հետ համատեղելի չէ:

3. Հանձնաժողովի ստացած դիմումներից մեկը վերաբերել է քաղաքացիական ծառայության՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փորձագետի պաշտոնի հետ համատեղելիությանը: Դեպքի առնչությամբ Հանձնաժողովը պարզաբանել է, որ ՊՈԱԿ-ի աշխատակից փորձագետները պետական մարմնում քաղաքացիական աշխատանք կատարող անձինք են, որոնց գործունեությունն իր բնույթով գիտական գործունեություն չէ, ուստի նշված պաշտոնները «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելի են:

4. Փորձագետի աշխատանքին վերաբերող մեկ այլ դիմումով Հանձնաժողովից խնդրել են պարզաբանել՝ արդյոք հանրային ծառայողները, դատավորները կամ դատախազները, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք իրավունք ունեն կատարել վճարովի աշխատանք միջազգային կամ տեղական ոչ առևտրային կազմակերպությունների՝ հասարակական կազմակերպությունների կամ հիմնադրամների համար՝ ներգրավվելով որպես տեղացի փորձագետներ՝ ուսումնասիրելու որևէ ոլորտին առնչվող հայաստանյան օրենսդրությունը և/կամ միջազգային փորձը և դրա հիման վրա ներկայացնելու առաջարկներ: Կրկին հիմք ընդունելով նշված աշխատանքում գիտական նորույթի բացակայությունը՝ Հանձնաժողովը գտել է, որ նշված դեպքում փորձագետի աշխատանքը գիտական կամ ստեղծագործական աշխատանք չէ:

5. Հանձնաժողովը ստացել է նաև դիմումներ՝ կապված հասարակական կազմակերպություններում աշխատանքի համատեղելիության հետ: Մի դեպքում, օրինակ, Հանձնաժողովից պարզաբանում է հայցվել պետական հայեցողական

պաշտոն զբաղեցնող անձի կողմից հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ: Հանձնաժողովը, նկատի առնելով, որ հասարակական կազմակերպություններն ունեն ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, թույլատրելի է համարել նման համատեղումը՝ պայմանով, որ հասարակական կազմակերպությունում հանրային ծառայողի կողմից իրականացվող աշխատանքը չիրականացվի վճարովի հիմունքներով:

6. Հասարակական կազմակերպությունում գործունեության վերաբերյալ Հանձնաժողովի ստացած մեկ այլ դիմում վերաբերել է Ազգային ժողովի պատգամավորի՝ քաղաքական պաշտոնի և հասարակական կազմակերպության նախագահի պաշտոնների համատեղելիությանը: Հանձնաժողովը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների դրույթները, պարզաբանել է, որ պատգամավորի կողմից ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու համար օրենսդրությամբ արգելք սահմանված չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման գործունեությունը իրականացվում է վճարովի հիմունքներով:

7. Հանձնաժողովը պարզաբանում է տրամադրել նաև ասպիրանտուրայի վարիչի աշխատանքի՝ Ազգային ժողովի պատգամավորի օգնականի՝ պետական հայեցողական պաշտոնի հետ համատեղելիության վերաբերյալ: Հանձնաժողովը, մասնավորապես, նշել է, որ ասպիրանտուրայի վարիչի գործունեությունը (ասպիրանտների ընդունելություն, ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ) բացառապես վարչական և կազմակերպչական է, թեև իրականացվում է ուսումնական հաստատությունում, սակայն այն կրթական բնույթ չի կրում: Հետևապես, այն անհամատեղելի է պետական հայեցողական պաշտոնի հետ:

7.3 Մեդիա հրապարակումների ուսումնասիրություն

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի առնչությամբ կարող է հարուցել վարույթ լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: Լրատվամիջոցների հրապարակումները կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ իրավիճակային շահերի բախման դեպքի առերևույթ հատկանիշներ:

Այս գործառույթի շրջանակներում Հանձնաժողովն իրականացնում է պարբերական մեդիա մոնիթորինգ/մշտադիտարկում: Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ընդհանուր թվով 15 մեդիա հրապարակում: Նշված հրապարակումներից երկուսը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 13-ը՝ շահերի բախմանը:

Մեդիա հրապարակումների հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է նախնական ուսումնասիրություն, սակայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ներկա կարգավորումների շրջանակներում, հնարավորություն չի ունեցել հարուցել համապատասխան վարույթ և ընթացք տալ: Մեդիա հրապարակումների գերակշիռ մասը վերաբերել է պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց՝ պետական գնումների գործընթացներին մասնակցությանը, գործընթացի վրա նրանց ունեցած ուղղակի կամ անուղղակի ազդեցությանը: Հրապարակումներից մի քանիսը ստորև՝

1. Մամուլում հրապարակվել է հոդված փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին պատկանող ընկերության՝ պետական խոշոր գնումներում հաղթող ճանաչվելու վերաբերյալ: Հրապարակման մեջ տեղ գտած հանգամանքների առնչությամբ Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն, մասնավորապես, ուսումնասիրվել են պաշտոնատար անձին պատկանող ընկերության գործունեությունը, պետական գնումներին մասնակցության պատմությունը, ներկայացված հայտերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերը, դրանց ընթացակարգերը և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվություն:

2. Մեկ այլ հրապարակում վերաբերել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին պատկանող ընկերության՝ ՀՀ Պաշտպանության նախարարության հետ մոտ 5,5 մլրդ դրամ արժողությամբ պայմանագրի կնքմանը: Նախարարության կարիքների համար անցկացված գնման գործընթացը կազմակերպվել է հրատապ բաց մրցույթով: Հրապարակման մեջ նշված հանգամանքների առնչությամբ Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու տվյալ ընկերությանը պատգամավորի փոխկապակցված լինելու հարցը, ինչպես նաև ստուգել է գնումների գործընթացին Ընկերության մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվի առնելով, որ նշված ընկերությունները մասնակցության հայտ չեն ներկայացրել կամ հաղթող չեն ճանաչվել կոնկրետ այն պետական մարմնի/մարմինների կողմից պատվիրված գնման գործընթացներում, որտեղ տվյալ

պաշտոնատար անձինք զբաղեցնում են պաշտոն, Հանձնաժողովը չի կարողացել արձանագրել առերևույթ շահերի բախում:

Այսպես, շահերի բախման ներկա օրենսդրական կարգավորումներով ֆորմալ ընթացակարգերի պահպանումը զրկում է Հանձնաժողովին վարույթի շրջանակներում այս կամ այն պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական ազդեցությունը գնումների գործընթացի, կազմակերպվող մրցույթների և դրանց արդյունքների վրա գնահատելու հնարավորությունից: Ազդեցության օգտագործման տեսանկյունից հատկապես մտահոգիչ են «մեկ անձից» ընթացակարգով կատարվող գնումները, որոնք առավել ռիսկային են, և հաճախ Հանձնաժողովին հասցեագրված դիմումներն ու հրապարակումներն առնչվում են հենց այս ընթացակարգով իրականացվող գործարքներին:

3. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մեկ այլ մեդիա հրապարակում վերաբերել է ՀՀ վարչական դատարանի դատավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի խախտմանը: Վերջինս պաշտոնավարման ընթացքում հիմնել է առևտրային կազմակերպություն: Հրապարակման հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հանձնաժողովի նիստում: Հաշվի առնելով, որ քննարկման պահին անհամատեղելիությունը վերացված է եղել, Հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել:

Պետական գնումների գործընթացում շահերի բախման իրավիճակներին գնահատական տալու և դրանց պատշաճ արձագանքելու հնարավորությունը գործող կարգավորումների իմաստով սահմանափակ է: Այս խնդիրը արձանագրվել է Հանձնաժողովի կողմից՝ հիմնվելով թե՛ մեդիա ոլորտում թեմայի շուրջ դրսևորվող հետաքրքրության, թե՛ սեփական փորձի վրա: Հանձնաժողովը նախատեսում է անդրադառնալ այս հարցին օրենսդրական փոփոխությունների համատեքստում:

2021 թվականին քաղաքացիների (փաստաբանների), պետական մարմինների, զանգվածային լրատվական միջոցի, հասարակական կազմակերպության կողմից Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից, գրություններից, հարցումներից 66-ը մակագրվել են Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչությանը, որոնց ուսումնասիրության արդյունքում, դրանցում բարձրացված հարցերի բովանդակությամբ պայմանավորված, Հանձնաժողովի կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները: Մասնավորապես, պետական մարմնի կողմից Հանձնաժողովին է հասցեագրվել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջներն առերևույթ խախտելու վերաբերյալ գրություն, որի հիման վրա Հանձնաժողովի կողմից կայացված որոշմամբ հարուցվել է

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված համապատասխան վարույթ (տես կետ 6.2):

Ազգային ժողովի պատգամավորի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Հանձնաժողովին են հասցեագրվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ թվով 2 դիմումներ, որոնց քննության արդյունքում Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում կայացրել է վարույթ հարուցելը մերժելու մասին պատճառաբանված որոշումներ:

Քաղաքացիների կողմից Հանձնաժողովին են հասցեագրվել նաև թվով 8 դիմում-բողոքներ, որոնցով բարձրացված հարցերը վերաբերել են կոնկրետ դատական գործերով կայացված դատական ակտերի առնչությամբ դատավորների կողմից դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտումներին, Հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել են Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, իսկ այլ մարմինների իրավասություններին վերաբերող հարցեր պարունակող քաղաքացիների՝ թվով 4 դիմումներ վերահասցեագրվել են իրավասու վարչական մարմիններին (ՏԻՄ, տեսչական մարմին, ԱՍՀՆ, ԱԱԾ):

Հանձնաժողովին հասցեագրված քաղաքացիների՝ հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող թվով 4 դիմում-բողոքներ ներկայացվել են Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի կողմից դիմում-բողոքները իրավասու այլ մարմիններ վերահասցեագրվելու պարագայում այդ մասին ծանուցվել են բոլոր դիմումատու անձինք, միաժամանակ վերջիներիս է ներկայացվել նաև գրավոր հիմնավորում իրենց դիմումով ներկայացված հարցի՝ Հանձնաժողովին վերապահված գործառույթների շրջանակից դուրս լինելու վերաբերյալ:

Հանձնաժողովին քաղաքացիներից և պետական մարմիններից հասցեագրված շուրջ հինգ տասնյակ դիմումները (գրությունները) հիմնականում կրել են պարզաբանում հայցելու բնույթ, որոնցում բարձրացվել են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում կիրառվող կոնկրետ իրավանորմերի բովանդակության (պաշտոնատար անձանց ներկայացվող անհամատեղելիության պահանջներ սահմանող կարգավորումների, հայտարարագրման պարտավորություններին առնչվող իրավահարաբերության պահին գործող կարգավորումների) պարզաբանման

վերաբերյալ հարցեր: Հանձնաժողովի կողմից ներկայացվել են գրավոր պարզաբանումներ դրանցում բարձրացված բոլոր հարցերի վերաբերյալ[9]:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

Հանձնաժողովին վերապահված լիազորությունների իրականացման առավել արդյունավետ կանոնակարգումներ ապահովելու նպատակով միջազգային գործընկերների աջակցությամբ 2021 թվականի ընթացքում իրականացվել են օրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ, որոնց շրջանակում մշակվել և ներկայումս լրամշակման փուլում են գտնվում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագծով, մասնավորապես, նախատեսվում է.

- Բարելավել հայտարարագրերի ստուգման գործընթացը՝ սահմանելով ստուգման հասկացությունը, դրա հիմքերը, իրականացման ժամկետները՝ միաժամանակ Հանձնաժողովի իրավասությանը վերապահելով ստուգման գործընթացի հետ կապված առանձին կարգավորումներ սահմանելու իրավասություն,
- Հանձնաժողովի գործառույթների իրականացման ընթացքում որոշակի դեպքերում հրապարակային ծանուցումներ իրականացնելու օրենսդրական հնարավորության ապահովում,
- Հանձնաժողովի գործունեության ընթացքում վեր հանված առանձին իրավանորմերի ոչ միատեսակ մեկնաբանման, օրենսդրական բացերի վերացմանն ուղղված իրավակարգավորումների սահմանում:

[9] http://cpcarmenia.am/files/legislation/547.pdf
http://cpcarmenia.am/files/legislation/548.pdf

2021 թվականին Հանձնաժողովը գրավոր դիրքորոշումներ և առաջարկություններ է ներկայացրել նաև այլ պետական մարմինների կողմից շրջանառվող մի շարք օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ, մասնավորապես՝

- «ՀՀ դատական իշխանություն իրականացնող պաշտոնյաների խոցելիության ստուգման (վեթինգի) մասին», «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքների և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացվել է գրավոր կարծիք, որում, մասնավորապես, ներառված են հետևյալ դիտարկումները.

- նախագծով առաջարկվող կարգավորումների մի մասն, ընդհանուր առմամբ կրկնվում է: Մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի արդեն իսկ գործնականում իրականացվող գործառույթները.

- «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ հանրային ծառայողները՝ այդ թվում դատավորները, գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր են ներկայացնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ Հանձնաժողովը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում, իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հայտարարագրերի ստուգում և վերլուծություն: Ստուգման և վերլուծության ընթացում, ինչպես նաև վարույթի շրջանակներում Հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու նաև իրավիճակային հայտարարագիր (այդ թվում դատավորի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանցից): «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր, իսկ առերևույթ հանցագործության հատկանիշներ նկատելու դեպքում գործի նյութերն ուղարկում դատախազություն:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 2020 թվականի մարտի 25-ի փոփոխություններով (ՀՕ-199-Ն) 14-րդ հոդվածի՝ եզրափակիչ մաս և անցումային դրույթներ, մասում սահմանվում է, որ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց

հետո՝ երկու տարվա ժամկետում, Հանձնաժողովը վերլուծում է դատավորների հայտարարագրերը: Հայտարարագրերի վերլուծության համար Հանձնաժողովն օժտված է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով), բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պահանջելու և ստանալու լիազորությամբ («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, 2-րդ մաս):

Վերոգրյալից հետևում է, որ Հանձնաժողովն իրականացնում է այն գործառույթները, որոնք ըստ Օրենքի նախագծի վերապահված են լինելու «ստուգման հանձնաժողովին» (տես Օրենքի նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մասի դ կետ): Այս պարագայում գործառույթների կրկնությունը հանգեցնելու է իրավական անորոշության, ինչպես նաև հիմք է հանդիսանալու պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի իրականացման:

«Հանրային ծառայության մասին» օրենքով (2018 թվականի մարտի 23-ի խմբագրություն) պաշտոնատար անձանց, այդ թվում դատավորների համար սահմանվել է շահերի հայտարարագրման պարտավորությունը: Նույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ շահերի հայտարարագրի բովանդակությունը ներառում է պաշտոնատար անձի, վերջինիս ընտանիքի անդամի մասնակցությունն ու ներկայացվածությունը առևտրային, ոչ առևտրային կազմակերպություններում, Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված հինգ միլիոն դրամը գերազանցող պայմանագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով ներկայացված «խոցելիության ռիսկ» հասկացությունից ըստ էության ընկալվում է, որ այն վերաբերում է անհատական մակարդակում դատավորի անկախությանը, այսինքն՝ անհատական մակարդակում դատավորի կողմից անկախ և անաչառ որոշում կայացնելու ունակությանը: Մինչդեռ թե՛ տեղական, թե՛ միջազգային կազմակերպությունների կողմից շարունակաբար ահազանգվել է, որ Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության անկախության բացակայությունը համակարգային խնդիր է (տես ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության» Ներածություն վերնագրի ներքո, որտեղ ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության համակարգային խնդիրներ):

Նշված նախագծի առնչությամբ Հանձնաժողովի կողմից առաջարկվել է.

1. Նախագծի շուրջ կազմակերպել ընդլայնված աշխատանքային քննարկում, որտեղ գործող և Օրենքի նախագծով սահմանված որոշակի գործառույթ իրականացնող պետական ինստիտուտները, մասնավորապես Հանձնաժողովը, հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց գործունեության արդյունքները և այդ արդյունքների հիման վրա կհստակեցվեն Օրենքի նախագծով առաջարկվող գործողությունները, բացի այդ՝ Օրենսդիր, գործադիր մարմինները հնարավորություն կունենան վերանայելու բարեփոխման համար գործող ռազմավարությունները և մշակելու դրանց հետագա արդյունավետ իրականացումն ապահովող համարժեք միջոցառումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ,

2. Վերանայել Օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումները՝ ապահովելով նաև համապատասխան օրենսդրական առաջարկություններ, այնպիսի համակարգային լուծումներ, որոնք հնարավորություն կտան ապահովել.

- Դատավորի թեկնածուների խորը և համակողմանի մասնագիտական գիտելիքներ և հմտություն՝ ձևավորելով անկախ և քննադատական մտածողություն,
- մշակել առաջարկներ դատավորների գործունեության գնահատման գործող համակարգը օբյեկտիվորեն, համակողմանի և արդյունավետ կերպով գործարկելու համար,
- մշակել առաջարկներ դատական իշխանության կառավարման բարեփոխման՝ հովանավորչության և շահերի բախման նկատմամբ զգայունություն ունեցող համակարգի կառուցման համար,
- մշակել առաջարկներ քննչական մարմինների և դատախազության գործունեության բարեփոխման համար:

«Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականը ռազմավարության փաթեթը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացվել է գրավոր կարծիք, որում, մասնավորապես ներառված են հետևյալ դիտարկումները.

- Ներկայացված հանրային բարեփոխումների ոլորտներից յուրաքանչյուրի համար սահմանել իրատեսական և կոնկրետ հաստեագրված թիրախներ/վերջնարդյունքներ, որոնք չափելի են, հատուկ, ողջամիտ

ժամկետներով սահմանափակվող և իրականանալի: Ընդհանուր առմամբ, խորհուրդ չի տրվում նման երկարաժամկետությամբ ռազմավարական փաստաթղթեր ունենալ:

Նախատեսել այնպիսի միջոցառումներ, գործողություններ, որոնք ապահովում են փոփոխությունների հորիզոնական տարածումը, մասնավորապես՝ ստեղծել համապատասխան կապեր և գործակցություն ՀՀ Կառավարության կողմից հաստատված այլ ռազմավարությունների և դրանցով նախատեսված գործողությունների միջև:

Ապահովել ներկայացված միջոցառումների շարունակականությունը՝ դրանց նկատմամբ ձևավորելով հանրային պահանջատիրություն, վստահություն հանրային կառավարման բարեփոխման ողջ ժամանակահատվածում:

Հանրային ծառայողի բարեվարքության և էթիկայի ապահովման համար ապահովել ինստիտուցիոնալ համապատասխան մեխանիզմների ներդրում:

Թիրախավորել քաղաքացիական ծառայության համակարգը և վերջինիս բարեփոխումների միջոցով նախատեսել հանրային ծառայողի վարքագծի փոփոխության միջոցով նոր որակի հանրային կառավարման մշակույթի տարածում՝ առաջնայնությունների շարքում ներառելով ներքոնշված խնդիրները.

- Հանրային/պետական պաշտոն զբաղեցնող անձանց կարողությունների զարգացման միջոցով ձևավորել կոռուպցիայի և կոռուպցիոն գործարքների նկատմամբ զգայուն քաղաքացիական ծառայություն,
- Քաղաքացիական ծառայության համակարգում ներդնել նոր մոտեցում՝ պաշտոնավարող քաղաքացիական ծառայողների վերաորակավորման պարբերական համակարգ, որի արդյունքում կոնկրետ պաշտոնի համար կոնկրետ տևողությամբ աշխատանքային ստաժի առկայությունը՝ որպես սահմանափակ գործոն, կվերացվի: Այս կերպ նաև պետական կառավարման համակարգը կհամալրվի նոր և ավելի երիտասարդ կադրերով,
- Քաղաքացիական ծառայության մրցույթի՝ գրավոր և բանավոր մրցույթ, շղթայում ավելացնել բարեվարքության թեստեր, որոնք մշակված կլինեն Հանձնաժողովի հետ համաձայնեցված և կհամապատասխանեն կոռուպցիայի կանխարգելման շրջանակներում արդիականացվող բարեվարքության համակարգին,

- Քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը համապատասխանեցնել իրական գործառույթներին, իսկ գործառույթները բխեցնել տվյալ գերատեսչության երկարաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերից,
- Ներդնել քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման կարգ՝ հիմնված չափելի, կոնկրետ և մարդկային գործոնից զերծ չափորոշիչների վրա,
- Իրականացնել կրթական ծրագրերի ֆինանսավորում արտերկրում՝ մարդ-ռեսուրսի վերադարձի պայմանով,
- Պետական գերատեսչություններում պարտադիր պայման դարձնել ներքին վարքագծի կանոնների մանրամասն մշակումը, հաստատումն ու կիրառումը,
- Իրականացնել քաղաքացիական ծառայողների պարտադիր գործուղումներ մի գերատեսչությունից մյուսը՝ պաշտոնավարման որոշ ժամկետից հետո, անձնավորված կոռուպցիան նվազեցնելու նպատակով,
- Հանրային կառավարման համակարգում ներդնել պետական կառավարման ինստիտուտների ինքնագնահատման և մոնիթորինգի մեխանիզմներ, և դրա հիման վրա ինստիտուցիոնալ առողջացման ծրագրերի մշակման, իրականացման պրակտիկա,
- Ստեղծել իրավական ակտերի իրավական փորձագիտական կենտրոն,
- Ստեղծել իրավական հիմք և մեխանիզմներ՝ ինքնավար մարմինների նկատմամբ վերահսկողությունը, հաշվետվողականությունն ու գործունեության թափանցիկությունը բարձրացնելու նպատակով,
- Քարտեզագրել պետական կառավարման համակարգում գործող ինստիտուտներն ու քննարկել յուրաքանչյուրի գործող կարգավիճակի նպատակահարմարությունն ինստիտուտի կողմից իրականացվող առաքելության համատեքստում: Առանցքային է ապահովել պետական կառավարման համակարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների ինքնավարությունն ու անկախության իրական երաշխիքները, որպեսզի դրանց բացակայությունը չխաթարի այդ մարմինների առաքելությունն ու բուն նպատակը: Օրինակ՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակը, որը ենթակա է վարչապետի աշխատակազմին, իրականացնում է քաղաքացիական ծառայությանն առնչվող գործառույթներ, որոնք անմիջականորեն ազդեցություն

ունեն բոլոր ինքնավար մարմինների գործունեության վրա, հետևաբար արդեն իսկ գործող մոդելը խաթարում է ինքնավար մարմինների անկախությունը, ինչպես նաև անխուսափելիորեն գործնականում հնարավորություն չի ընձեռվում Քաղաքացիական ծառայության գրասենյակին իրականացնելու իր բուն առաքելությունը, քանի որ այն ենթակա է քաղաքական ինստիտուտի, հետևաբար իր գործառույթների իրականացման ամբողջ ընթացքում գտնվում է հավանական շահերի բախման իրավիճակում,

- Հստակեցնել թվայնացված լուծումների ներդրման բուն նպատակները: Առկա էլեկտրոնային լուծումները հիմնականում կրկնում են թղթային փաստաթղթաշրջանառությունն ու պրոցեսները՝ չստեղծելով որպես այդպիսին որևէ ավելացված արժեք վերլուծական կարողությունների, գործընթացների ավտոմատացված վերահսկողության, աշխատուժի կրճատման, ժամանակի տնտեսման տեսանկյունից: Առաջարկում ենք ռազմավարության մեջ արձանագրել թվային համակարգերի ներմուծման նպատակները, արձանագրել, թե յուրաքանչյուր թվային համակարգ ինչ խնդիրներ պետք է լուծի, որպեսզի այդ խնդիրները գործնականում չլուծող համակարգերի նախագծումը բացառվի: Օրինակ՝ e-request համակարգը, որտեղ բողոքներն ու դիմումները գրվում են տեքստային տարբերակով, չունի բողոքի դասակարգման մեխանիզմ: Նման մեխանիզմը կառավարությանը հնարավորություն կտա հանրային բարեփոխումների կամ ոլորտային ռազմավարությունների մշակման ընթացքում հիմնվել քաղաքացիների բողոքների ոլորտային ստատիստիկ դասակարգման վրա և առաջնահերթություն տալ այն ոլորտներին, որոնց նկատմամբ բողոքներն ամենաշատն են,

- Հստակեցնել ռազմավարական միջոցառումների նպատակները, մասնավորեցնել դրանց հակակոռուպցիոն ազդեցության շրջանակը: Ռազմավարության մեջ ներառված միջոցառումները մեծամասամբ անդրադառնում են շատ կարևոր խնդիրների, որոնց մեջ գործնականում թաքնված են կոռուպցիոն դրսևորումներ: Առաջարկվող միջոցառումների մեծ մասն ուղղված է հենց կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանը,սակայն այն պարագայում, երբ տվյալ միջոցառման նպատակը չի շեշտադրում հենց կոռուպցիոն դրսևորումների կանխարգելումը և չի մատնանշում, թե կոնկրետ ինչ մեխանիզմով է այդ միջոցառումը կանխարգելում այդ դրսևորումները, մեծ է իմպլեմենտացիայի փուլում այդ միջոցառումների ալտերացիայի հավանականությունը և դրանց փոփոխության արդյունքում կոռուպցիայի կանխարգելմանն այլևս չծառայելու հնարավորությունը: Օրինակ՝ back office -

front office ծառայությունների մատուցման մոդելը հետապնդում է երկու նպատակ. անձնակազմի մասնագիտացում և առավել որակյալ և արագ ծառայությունների մատուցում, ինչպես նաև կոռուպցիոն գործարքների կանխարգելում՝ որոշումների կայացման լիազորությունների՝ ամբողջական back office պատվիրակման ճանապարհով: Եթե այս նպատակները ռազմավարությամբ չամրագրվեն և իրականացման փուլում որոշումների կայացումը մնա front office լիազորությունների շրջանակում, ապա նախաձեռնությունն իր նպատակին չի ծառայի և բարեփոխումն ինքնին չի կայանա:

Առաջարկվել է այս ուղենիշային առաջարկների, ինչպես նաև առավել թիրախային գործիքակազմի շուրջ կազմակերպել աշխատանքային քննարկում և համաձայնեցնել գործընթացում Հանձնաժողովի հետագա ներգրավման շրջանակը:

ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից ներկայացված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացվել է գրավոր կարծիք, որում, մասնավորապես, ներառված են հետևյալ դիտարկումները.

1) Նախագծով եզրակացությունները հրապարակելու պահանջ սահմանել տվյալ պաշտոնում արդեն իսկ նշանակված պետական պաշտոնյաների բարեվարքության վերաբերյալ տրամադրված եզրակացությունների համար:

2) Հաշվի առնել, որ բարեվարքության ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից ընդունվող եզրակացությունը ներառում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով պաշտպանվող տվյալներ, որոնք ենթակա չեն հրապարակման, հետևաբար, յուրաքանչյուր դեպքում Հանձնաժողովի կողմից նման եզրակացություններ հրապարակելիս օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տվյալները ենթակա չեն լինելու հրապարակման:

3) Վերոգրյալների հաշվառմամբ սահմանել արդեն իսկ նշանակված պետական պաշտոնյաների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններից բացառապես քաղվածքներ հրապարակելու պահանջ:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկվել է նախագծի 3-րդ հոդվածով ավելացնել 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովի եզրակացությունը, որով արձանագրված անհամապատասխանությունների և դրանց վերաբերյալ հայտարարատուի կողմից տրված արդյունքների համադրման արդյունքում ողջամտորեն կասկած է ձևավորվել, որ

ա) հայտարարատու պաշտոնատար անձի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և կամ պարտավորությունների նվազումը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով կամ

բ) եկամտի աղբյուրը օրինական չէ»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքների նախագծերով նախատեսվել է որպես Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների և դատավորների լիազորությունների դադարեցման հիմք սահմանել անհամատեղելիության լրացուցիչ պահանջ, ըստ որի՝ անհամատեղելիության պահանջների խախտում է համարվում նաև դատավորի կողմից մարդու հիմնարար իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարած լինելու փաստը, եթե Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել տասնհինգ տարի: Այդ առնչությամբ Հանձնաժողովի կողմից ներկայացվել է կարծիք հետևյալի մասին.

Նշվել է, որ առաջարկվող փոփոխությունները վերաբերելի են և ամբողջապես տեղավորվում են վարքագծի կանոնի խախտման հայեցակարգի շրջանակում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է նշված կարգավորումը հնարավորության դեպքում չսահմանել անհամատեղելիության հայեցակարգի ներքո, իսկ, այնուամենայնիվ, սահմանելու պարագայում՝ նախատեսել խախտման դեպքում Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող մարմին:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են նաև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և

սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացում կտարելու մասին» օրենքների նախագծերի (Պ-047-23.09.2021-ՊԻ-011/0), «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացում կտարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթները, ինչպես նաև Վարչական իրավախախտումների մասին» Ձև 1-ՎԻ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 50-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշման նախագիծը: Նշված նախագծերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից առաջարկություններ և դիտարկումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է նաև ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի՝ սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող գործառույթների պատշաճ իրականացման ուղղված օրենսդրական կարգավորումներ նախատեսող նախագիծը, որի վերաբերյալ ներկայացվել է հետևյալ առաջարկությունը՝

Նախագծով նախատեսված կանոնակարգումներով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատվելու առանձնահատուկ հիմք:

Նշված հիմքը բնորոշվում է որպես նշված անձանց կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը

աշխատանքի (ծառայության) ներկայանալիս գործատուին չներկայացնելու պարագայում իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումը չթույլատրվելու հետևանքով որոշակի ժամանակահատվածում աշխատանքային պարտականությունները չկատարելու հետևանք: Ընդ որում, Նախագծով սահմանված է ավելի քան 30 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 50 օր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները չկատարելու ժամանակահատվածը: Հաշվի առնելով այն, որ նշված կարգավորումն, ըստ էության, նպատակ է հետապնդում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները փաստացի չկատարելու պարագայում սահմանել լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք, առաջարկվում է Նախագծով սահմանված օրացուցային օր ժամկետները փոխարինել աշխատանքային օրերով հաշվարկվող ժամկետներով: Նշված կարգավորմամբ կբացառվի նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածի ներառումը օրացուցային օրերում:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի (ներառյալ՝ քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց) համար Նախագծով սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը, սակայն չի տարածվում այն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակի վրա, որոնց պաշտոնը կամ ընտրովի պաշտոն է կամ վերջիններս նշանակվում են սահմանադրական գործընթացների արդյունքում: Մինչդեռ, նման կարգավորումը, գտնում ենք, որ չի բխում օրենքով կանխորոշված բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակից՝ մասնավորապես հաշվի առնելով այն, որ այդպիսի պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից իրենց աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումն իր հերթին անխուսափելի է դարձնում այլ անձանց հետ շփումը, վարակի տարածման նույնչափ, եթե ոչ ավել ռիսկերով:

Նախագծով սահմանված կարգավորումներով ամրագրվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու առանձին հիմք, որի անհրաժեշտությունը միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց համար սահմանելը Նախագծով հիմնավորվում է վերջիններիս կողմից հանրության և պետության համար կարևոր նշանակություն ունեցող գործառույթների պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ նրանց նկատմամբ գործում են առանձնահատուկ, խիստ պահանջներ ու սահմանափակումներ՝

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք, գործունեության այլ տեսակներով զբաղվելու սահմանափակումներ, գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություններ, վարքագծի կանոններ, լիազորությունների դադարեցման հիմքեր: Նշվածի համատեքստում, Հանձնաժողովը նշել է, որ հիմնավորմամբ վկայակոչված օրենսդրական կարգավորումները նպատակ են հետապնդում ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված շահերի բախման դեպքերի կանխումը, վարքագծի կանոնների, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահպանումը և որևէ կերպ չեն առնչվում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: Նշվածի համատեքստում աշխատանքից ազատման հիմքերին վերաբերող նույնանման կանոնակարգման ամրագրումը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում չնախատեսելը, այն պարագայում, երբ վարակիչ հիվանդությունների տարածման ռիսկն առավել բարձր է հատկապես աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում գործող բնակչությանը ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտներում, խնդրահարույց է:

Միաժամանակ հաշվի առնելով այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողներին Նախագծով առաջադրվում է անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու հետ կապված նոր պարտականություն, ինչպես նաև այդ պարտականության ոչ պատշաճ կատարման հետևանքով պաշտոնից ազատման նոր կարգավորում, առաջարկվել է լրացուցիչ քննարկման առարկա դարձնել նաև առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատվող՝ աշխատանքի ներկայանալու համար անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերն ամրագրող իրավակարգավորումների բնույթը, քանի որ Նախագծով առաջադրվող նոր պարտականության բովանդակային սահմանները բացառապես պայմանավորված են նշված իրավակարգավորումների պահանջներով:

2021 թվականի ընթացքում նաև մշակվել են մի շարք օրենքների նախագծեր, որոնք բխում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացման անհրաժեշտությունից՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ,

2) «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ:

Միաժամանակ, մշակվել է «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծը: Ի թիվս այլ դրույթների, նախագծի շրջանակներում մշակվել է գնային առաջարկի առավելագույն շեմը որոշելու կարգ, սահմանվել է մրցութային առաջարկին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Նախագիծը քննարկվել է որոշ աուդիտորների, ինչպես նաև Ֆինանսների նախարարության հետ, որոնց ներկայացրած առաջարկություններն իրացվել են նախագծում:

IX. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի առանցքային մարմիններից է: Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատի իրացման տեսանկյունից առավել կարևորվում են այնպիսի կառուցակարգերի ներդրումը, որոնք կդիմակայեն ժամանակի ընթացքին, դրա բերած փոփոխություններին և փորձություններին: Սա, մասնավորապես նշանակում է, որ կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կառուցակարգերը պետք է ամբողջովին անկախ լինեն քաղաքական հնարավոր ազդեցություններից, պետք է երաշխավորված լինեն երկրում քաղաքական դաշտի ցանկացած փոփոխության ներգործության հնարավորությունից և բխեն ոչ թե տվյալ պահի հրամայականից, այլ միջազգային լավագույն փորձից և ժողովրդավարական պետության զարգացման տեսլականից: Այսպիսով, Հանձնաժողովն այս սկզբունքներն է դրել հակակոռուպցիոն ծրագրերի մշակման, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանն իր մասնակցության հիմքում: Մասնավորապես՝

1) Հանձնաժողովը մասնակցել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի վերանայման աշխատանքներին, ներկայացրել առաջարկություններ, որոնք, ի թիվս այլնի, անդրադարձել են հետևյալ թեմաներին.

- Հանձնաժողովի գործունեության անկախության երաշխիքների ամրապնդում, մասնավորապես՝ Հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակի ամրապնդում, Հանձնաժողովի հաստիքացուցակի և կադրերի համալրման հարցում գործադիր իշխանության, մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հնարավոր

ազդեցության չեզոքացում, Հանձնաժողովի բյուջետային հայցի քննարկման և դրա հաստատման հարցում գործադիր իշխանության ազդեցության սահմանափակում, Հանձնաժողովի բյուջեի կրճատման միջոցով Հանձնաժողովի վրա հանարավոր ներգործության չեզոքացում և այլն:

- Վարչական կոռուպցիայի հաղթահարման առավել հստակ կառուցակարգեր, պետական հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, դրա պարտադիր ներդրում պետական կառավարման բոլոր մարմիններում, համապատասխանության ապահովում, վարչական պրոցեսների թվայնացում, մարդկային ներազդեցության գործոնի սահմանափակում, օրենսդրական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն, հանրային կառավարման համակարգում ներքին անանուն ազդարարման համակարգի ներդրում և այլն:
- Բարեվարքության հարցերով կազմակերպիչների անկախության երաշխիքների ամրապնդում, նրանց օրենսդրական և գործառնական կարգավիճակի վերանայում, դրա համապատասխանեցում ինստիտուտի բուն նպատակին և գործառնական ու ինստիտուցիոնալ փոխկապակցում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին կից հակակոռուպցիոն կրթության ակադեմիայի ստեղծման տեսլական:
- Հանձնաժողովը մասնակցել է նաև հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության քննարկմանը և ներկայացրել է առաջարկություններ՝ անդրադառնալով հետևյալին.

2) Պետական ինստիտուտների առաքելության և նրանց ինստիտուցիոնալ կարգավիճակի անհամապատասխանությունների վերհանում և վերացում,

- Քաղաքացիական ծառայության համակարգի և կառուցակարգերի կատարելագործում, մարդկային ռեսուրսների կառավարման առավել նորարար, ճկուն և գործուն մեխանիզմների ներդրում,
- Թվայնացման քաղաքականության հստակեցում, մասնավորապես՝ թվայնացման ազգային ստանդարտի ներդրում, որը կապահովի թվային գործիքների անվտանգության, փոխգործելիության, բիզնես պրոցեսների թվայնացման միասնական համակարգի ստեղծում, ինչն էլ հնարավորություն կտա թղթային բիզնես պրոցեսներն ուղղակի էլեկտրոնային դաշտ տեղափոխելու փոխարեն ստանալ իրական՝ վերլուծական կարողություններով օժտված, ժամանակակից զարգացումներին համապատասխանող թվային գործիքների ստեղծում և դրանց փոխգործելիության արդյունքում արդյունավետ թվային պետական կառավարման ներդրում:

3) Հանձնաժողովին վերապահված լիազորությունների իրականացման առավել արդյունավետ կանոնակարգումներ ապահովելու նպատակով միջազգային գործընկերների աջակցությամբ 2021 թվականի ընթացքում իրականացվել են Հանձնաժողովի գործունեության ընթացքում վեր հանված խնդրահարույց կարգավորումների, օրենսդրական բացերի վերացմանն ուղղված օրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ, որոնց շրջանակում, մասնավորապես, մշակվել և ներկայումս լրամշակման փուլում են գտնվում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Նախագծում, մասնավորապես առաջարկվում են փոփոխություններ Հանձնաժողովի լիազորություններին և գործառույթներին վերաբերելի հոդվածներում, ամբողջությամբ վերախմբագրվում է հայտարարագրերի վերլուծությանը վերաբերող հոդվածը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, նախատեսվում է բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրվող խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ հատվածների հրապարակման լիազորություն, կատարելագործվում են վարչական և քրեական պատասխանատվության հետ կապված օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև նախատեսվում են մի շարք այլ փոփոխություններ, որոնք բխում են Հանձնաժողովի կազմավորման օրվանից մինչ այժմ ձևավորված իրավակիրառ պրակտիկայից:

4) Հանձնաժողովը մշակել է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի կառուցակարգերի կատարելագործման հայեցակարգ և գործողությունների ծրագիր, որն իր արտացոլումն է գտել ՀՀ կառավարության գործողությունների ծրագրում: Հայեցակարգը մասնավորապես անդրադառնում է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությանը՝ առավել մանրամասն բացատրելով «Նվեր», «Հյուրասիրություն», «Թույլատրելի նվեր» եզրույթների իմաստը, դրանց հայտարարագրման և հանձնման կարգը, հայեցակարգից բխող դրույթները խախտելու դեպքում՝ սահմանված պատասխանատվությունը: Հանձնաժողովի առաջարկությամբ նախատեսվում է նվերների ընդունման արգելքի գործառնական կիրառելիության նկատմամբ սահմանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերահսկողական լիազորությունն՝ իբրև վերահսկող լիազոր մարմին, իսկ պետական կառավարման համակարգի մարմիններում

ներքին վերահսկողությունը վերապահել բարեվարքության հարցերով կազմակերպիչներին: Առաջարկվում է նաև օրենսդրական կարգավորումներից հեռացնել թույլատրելի նվերների գործող ցանկը և սահմանել նոր, առավել հստակ և խիստ սահմանափակ ցանկ, ինչը հնարավորություն կտա նվերների ընդունման արգելքը ձևական օրենսդրական պահանջից դարձնել գործուն վերահսկողական մեխանիզմ: Առաջարկվում է նաև նվերների ընդունման արգելքը դուրս բերել հանրային ծառայության համակարգի «վարքագծի կանոններ» տարրից և սահմանել որպես բարեվարքության համակարգի առանձին տարր, իսկ խախտումների համար կարգապահական պատասխանատվության փոխարեն սահմանել վարչական և քրեական պատասխանատվություն: Հայեցակարգի հաստատմամբ հնարավոր կլինի իրականացնել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական լիազորությունների իրականացման ընթացքում ստացած նվերների վերահսկողություն, ինչպես նաև կենտրոնական մարմնի սահմանում, որը կիրականացնի պատշաճ և միասնական քաղաքականություն նվերների ընդունման արգելքի իրավական նորմերի կիրառման ոլորտում: Հայեցակարգը միտված է ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվեր ընդունելու արգելքի վերաբերյալ սահմանափակում նախատեսող իրավակարգավորումների միասնականությունը՝ դրանք զետեղելով միայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և տարածելով հանրային ծառայության բոլոր ոլորտների և տեսակների վրա: Հայեցակարգի առանցքային կետերից է նաև նվերների թվայնացված ռեեստրի ստեղծումը, որը կապահովի նվերների հայտարարագրման, դրանց գնահատման, ինչպես նաև տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ, ինչպես նաև կապահովի համակարգի փոխգործելիությունը հայտարարագրերի թվային համակարգի հետ: Արդեն իսկ ընթացքի մեջ են օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագծման աշխատանքները: Դրանց ներկայացումը ՀՀ կառավարությանը նախատեսվում է 2022 թվականի մայիս ամսին:

5) Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների նախագծմանը զուգահեռ Հանձնաժողովը նախաձեռնել է նաև հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կարգապահական պատասխնատվության օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն, օրենսդրական բացերի վերհանում և դրանց շտկմանն ուղղված առաջարկների ամփոփում: Զեկույցը համառոտ կերպով ներկայացվել է 2022 թվականի փետրվարի 23-ին ԵԽ/ԵՄ գործընկերություն հանուն լավ կառավարման II ծրագրի շրջանակներում կազմակերպված բարեվարքությանը և կոռուպցիայի կանխարգելմանը նվիրված բարձր համաժողովի ընթացքում:

Նախատեսվում է զեկույցի հիման վրա կազմել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որպեսզի ապահովվի վարքագծի ոլորտային կանոնագրքերի արդյունավետ կիրարկման հնարավորությունը:

6) Հանձնաժողովի գործունեության տարիների ընթացքում դուրս են բերվել նաև Հանրային ծառայության մասին օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների վերաբերյալ բացեր, խնդիրներ, որոնք Հանձնաժողովը 2021 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ամփոփել է օրենսդրական փոփոխությունների հայեցակարգի մեջ, ինչի հիման վրա էլ մեկնարկել են տվյալ ոլորտներին վերաբերող օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագծման աշխատանքները: Հայեցակարգը, մասնավորապես, անդրադառնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վրա տարածվող՝ վճարովի այլ աշխատանքով զբաղվելու օրենսդրական արգելքին, դրա նպատակայնությանը և առկա խիստ կարգավորումների նպատակահարմարությանը: Ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող անհամատեղելիության պահանջների համատեքստում քննարկվում է կարգավորման ազդեցությունն արդեն իսկ պաշտոնավարող անձանց վրա, ինչպես նաև հավատարմագրային կառավարման ինստիտուտի նպատակահարմարությանն ու արդյունավետությանը: Առաջարկվում են մի շարք փոփոխություններ շահերի բախմանը վերաբերելի հոդվածում, մասնավորապես՝ նախատեսվում է բացի փաստացի շահերի բախման դեպքերից՝ օրենսդրորեն սահմանել նաև հավանական և թվացյալ շահերի բախումը և հստակեցնել դրանց կառավարման գործիքակազմը, ինչպես նաև հստակեցնել կիրառվող պատասխանատվության միջոցները: Անդրադարձ է կատարվել նաև այլ սահմանափակումներն ամփոփող հոդվածին, առհասարակ նշված սահմանափակումները առանձին հոդվածով սահմանելու անհրաժեշտությանը, ինչպես նաև առանձին դրույթների խմբագրմանը՝ դրանց բուն նպատակից ելնելով: Օրենսդրական փոփոխությունների փաթեթը, ըստ ՀՀ կառավարության ծրագրի, պետք է ներկայացվի 2022 թվականի մայիս ամսվա ընթացքում: Ներկայում ընթանում են միջազգային փորձագետների կողմից հայեցակարգի ուսումնասիրության և առաջարկությունների փաթեթի մշակման աշխատանքները:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովը դիրքորոշումներ և առաջարկություններ է ներկայացրել նաև այլ պետական մարմինների կողմից շրջանառվող մի շարք օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ, մասնավորապես՝

1) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի և կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին 2020 թվականի մարտի 31-ին շրջանառված և 2021 թվականի փետրվարի 16-ին հաստատված օրենքի նախագծի վերաբերյալ Հանձնաժողովը ներկայացրել է թվով 13 դիտարկում, մասնավորապես առաջարկելով՝

- Առանձնացնել բանկային ավանդը և բանկային պահատուփը՝ որպես կատեգորիաներ և նախագծում ներառել առանձին կետերով: Բանկային պահատուփում առկա գույքի հայտարարագրման պահանջի փոխարեն սահմանել բանկային պահատուփի առկայության փաստը հայտարարագրելու պահանջ՝ առանց նրանում առկա գույքի հայտարարագրման: Ավելացնել նաև փաստացի տիրապետման տակ գտնվող գույքը, օրինակ՝ այն բոլոր դեպքերի համար, երբ համայնքի ղեկավարի և ավագանու որոշմամբ հողամաս է հատկացվել, սակայն սեփականության իրավունքը չի գրանցվել, բայց անձը փաստացի տիրապետում է այդ գույքը:
- Ծախսերի հայտարարագրում ավելացնել ծախսի նոր տեսակ, անվանել այն «այլ ծախսեր», որպեսզի հնարավոր լինի բացի նախագծով առաջարկված ծախսերի կոնկրետ տեսակներից ապահովել նաև այլ բնույթի ծախսերի պատշաճ հայտարարագրումը:
- Եկամուտների հայտարարագրում ստացված վարկերի հայտարարագրման պարագայում սահմանել նաև պարտավորություն հայտարարագրելու ստացված վարկի նպատակային նշանակությունը:
- Ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունները ներկայացնել ՀՀ Կուսակցությունների մասին օրենքի փոփոխությունների հետ՝ որպես մեկ փաթեթ:
- Վերանայել Ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների նախագիծը՝ համալրելով Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացված դիտարկումներով:

2) Ի կատարումն ՀՀ վարչապետի՝ 2021 թվականի մայիսի 17-ի թիվ 02/05.1/15713-2021 հանձնարարականի՝ Արդարադատության նախարարությունից ստացված «ՀՀ դատական իշխանություն իրականացնող պաշտոնյաների խոցելիության ստուգման (վեթինգի) մասին», «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքների և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացվել է գրավոր կարծիք, որում, մասնավորապես, շեշտադրվել է, որ նախագծով առաջարկվող կարգավորումների մի մասն, ընդհանուր առմամբ կրկնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին արդեն իսկ գործնականում վերապահված գործառույթները, մասնավորապես՝ պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատավորների գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերի ստուգում և վերլուծություն, դրա արդյունքներով դատավորների նկատմամբ վարչական և կարգապահական վարույթներ հարուցելու լիազորություն, ինչպես նաև առերևույթ հանցագործության հատկանիշներ նկատելու դեպքում գործի փոխանցում Գլխավոր դատախազություն: Հատկանշական է նաև, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 2020 թվականի մարտի 25-ի փոփոխություններով (ՀՕ-199-Ն) սահմանվում է, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ժամկետում, Հանձնաժողովը վերլուծում է դատավորների հայտարարագրերը: Հայտարարագրերի վերլուծության համար Հանձնաժողովն օժտված է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով), բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պահանջելու և ստանալու լիազորությամբ («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, 2-րդ մաս):

Նախագծի առնչությամբ Հանձնաժողովի կողմից առաջարկվել է.

- Նախագծի շուրջ կազմակերպել ընդլայնված աշխատանքային քննարկում, որտեղ գործող և Օրենքի նախագծով սահմանված որոշակի գործառույթ իրականացնող պետական ինստիտուտները, մասնավորապես՝ Հանձնաժողովը, հնարավորություն կունենան ներկայացնել իրենց գործունեության արդյունքները և այդ արդյունքների հիման վրա կհստակեցվեն Օրենքի նախագծով առաջարկվող գործողությունները, բացի այդ՝ Օրենսդիր, գործադիր մարմինները հնարավորություն կունենան վերանայել բարեփոխման համար գործող ռազմավարությունները և մշակել դրանց հետագա արդյունավետ իրականացումն ապահովող համարժեք միջոցառումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ,
- Վերանայել Օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումները՝ ապահովելով նաև համապատասխան օրենսդրական առաջարկություններ, այնպիսի համակարգային լուծումներ, որոնք հնարավորություն կտան ապահովել.

· Դատավորի թեկնածուների խորը և համակողմանի մասնագիտական գիտելիքներ և հմտություն՝ ձևավորելով անկախ և քննադատական մտածողություն,

· մշակել առաջարկներ դատավորների գործունեության գնահատման գործող համակարգը օբյեկտիվորեն, համակողմանի և արդյունավետ կերպով գործարկելու համար,

· մշակել առաջարկներ դատական իշխանության կառավարման բարեփոխում՝ հովանավորչության և շահերի բախման նկատմամբ զգայունություն ունեցող համակարգի կառուցման համար,

· մշակել առաջարկներ քննչական մարմինների և դատախազության գործունեության բարեփոխման համար:

3) Ուսումնասիրվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացում կտարելու մասին» օրենքների նախագծերի (Պ-047-23.09.2021-ՊԻ-011/0), «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացում կտարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթները, ինչպես նաև Վարչական իրավախախտումների մասին» ՁԼ 1-ՎԻ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 50-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի

Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշման նախագիծը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովի կողմից առաջարկություններ և դիտարկումներ չեն ներկայացվել:

4) Ուսումնասիրվել է նաև ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող գործառույթների պատշաճ իրականացմանն ուղղված օրենսդրական կարգավորումներ նախատեսող նախագիծը, որի վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրել է, որ առաջարկվող կարգավորումները, ընդհանուր առմամբ խնդրահարույց են հետևյալ հիմնավորումներով.

- Նախագծով նախատեսված կանոնակարգումներով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատվելու առանձնահատուկ հիմք: Նշված հիմքը բնորոշվում է որպես նշված անձանց կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը աշխատանքի (ծառայության) ներկայանալիս գործատուին չներկայացնելու պարագայում իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումը չթույլատրվելու հետևանքով որոշակի ժամանակահատվածում աշխատանքային պարտականությունները չկատարելու հետևանք: Ընդ որում, նախագծով սահմանված է ավելի քան 30 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 50 օր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները չկատարելու ժամանակահատվածը: Հաշվի առնելով այն, որ նշված կարգավորումն, ըստ էության, նպատակ է հետապնդում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները փաստացի չկատարելու պարագայում սահմանել լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք, առաջարկվում է նախագծով սահմանված օրացուցային օր ժամկետները փոխարինել աշխատանքային օրերով հաշվարկվող ժամկետներով: Նշված կարգավորմամբ կբացառվի նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածի ներառումը օրացուցային օրերում:
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի (ներառյալ՝ քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում

իրականացնող անձանց) համար նախագծով սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը, սակայն չի տարածվում այն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակի նկատմամբ, որոնց պաշտոնը կամ ընտրովի պաշտոն է կամ վերջիններս նշանակվում են սահմանադրական գործընթացների արդյունքում: Մինչդեռ, նման կարգավորումը, գտնում ենք, որ չի բխում օրենքով կանխորոշված բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակից՝ մասնավորապես հաշվի առնելով այն, որ այդպիսի պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից իրենց աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումն իր հերթին անխուսափելի է դարձնում այլ անձանց հետ շփումը՝ վարակի տարածման նույնչափ, եթե ոչ ավելի ռիսկերով:

- Նախագծով սահմանված կարգավորումներով ամրագրվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու առանձին հիմք, որի անհրաժեշտությունը միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց համար սահմանելը, նախագծով հիմնավորվում է վերջիններիս կողմից հանրության և պետության համար կարևոր նշանակություն ունեցող գործառույթների պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ նրանց նկատմամբ գործում են առանձնահատուկ, խիստ պահանջներ ու սահմանափակումներ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք, գործունեության այլ տեսակներով զբաղվելու սահմանափակումներ, գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություններ, վարքագծի կանոններ, լիազորությունների դադարեցման հիմքեր: Նշվածի համատեքստում, Հանձնաժողովը նշել է, որ հիմնավորմամբ վկայակոչված օրենսդրական կարգավորումները նպատակ են հետապնդում ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված շահերի բախման դեպքերի կանխումը, վարքագծի կանոնների, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահպանումը և որևէ կերպ չեն առնչվում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: Նշվածի համատեքստում, աշխատանքից ազատման հիմքերին վերաբերող նույնանման կանոնակարգման ամրագրումը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում չնախատեսելը այն պարագայում, երբ վարակիչ հիվանդությունների տարածման ռիսկն առավել բարձր է հատկապես

աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում գործող բնակչությանը ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտներում, խնդրահարույց է:

- Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողներին նախագծով առաջադրվում է անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու հետ կապված նոր պարտականություն, ինչպես նաև այդ պարտականության ոչ պատշաճ կատարման հետևանքով պաշտոնից ազատման նոր կարգավորում, առաջարկվել է լրացուցիչ քննարկման առարկա դարձնել նաև առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատվող՝ աշխատանքի ներկայանալու համար անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերն ամրագրող իրավակարգավորումների բնույթը, քանի որ նախագծով առաջադրվող նոր պարտականության բովանդակային սահմանները բացառապես պայմանավորված են նշված իրավակարգավորումների պահանջներով:

X. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԶՍՊՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսվում է իրականացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Այս գործընթացում ռազմավարությամբ Հանձնաժողովին է վերապահվել կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումն ու հաստատումը: Հանձնաժողովը, ձևավորման պահից սկսած, լայնածավալ աշխատանքներ է տարել այս ուղղությամբ: Մասնավորապես, միջազգային գործընկերների հետ համագործակցելով՝ կազմվել են մի շարք մեթոդական ձեռնարկներ, որոնք սակայն իրենց բնույթով ամբողջությամբ չեն հասցեագրել այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն կոռուպցիոն ռիսկերի գնահատմամբ, ինչպես նաև չեն համընկել հակակոռուպցիոն ռազմավարության նախանշած նպատակներին, ըստ որոնց մեկ տարվա ընթացքում նախատեսվում էր ռիսկերի գնահատում իրականացնել պետական կառավարման 13 մարմիններում և 8 ՏԻՄ-երում: Այսպես, ԱՄՆ ՄԶԳ աջակցության ծրագրի կողմից կազմված մեթոդաբանությունը Աֆղանստանի կրթական համակարգում փորձարկված մեթոդաբանություն էր, որը միտված էր բացահայտելու համակարգի խոցելիությունը կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ: Մեթոդաբանությանը համահունչ ռիսկերի ամբողջական գնահատման իրականացումը պիլոտային ծրագրի ընթացքում տևել էր մոտավորապես մեկ տարի մեկ մարմնում, ինչը ընդհանուր առմամբ կրկնվելու էր նաև

Հանձնաժողովի կողմից տվյալ մեթոդաբանությունը հաստատելու դեպքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմավարության հիմքում դրվել էր մարմինների արագ ինքնագնահատման կոնցեպտը, Հանձնաժողովը ստիպված էր այլընտրանքային մեթոդաբանություն մշակել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համար: Այնուամենայնիվ, ծրագրի փորձագիտական խումբը ներկայացրել էր նկատառումներ և հիմնավորել, թե ինչու կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման մոդելի կիրառումը արդյունավետ չէ և չի ծառայում իր ռազմավարական նպատակին: Մասնավորապես, փորձագիտական խումբը մատնանշել է, որ կոռուպցիան համապետական մակարդակով կանխարգելելու համար Հանձնաժողովին անհրաժեշտ է կոռուպցիոն ռիսկերի ախտորոշման, բացահայտման և մեղմացման համակարգային մեթոդաբանություն, որը կընդգրկի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար մշակված ստանդարտացված պահանջներ, մասնավորապես՝ ներքին հակակոռուպցիոն, ինչպես նաև չկոռումպացված միջավայրի ստեղծմանն ուղղված գործողությունների պլանի որդեգրում և վերոնշյալ աշխատանքների ընթացքի վերաբերյալ կանոնավոր կերպով զեկույցների ներկայացում կառավարությանը, խորհրդարանին և հասարակությանը: Ընդհանուր առմամբ, նման մեթոդաբանությունը պետք է սահմանի հետևյալ ուղեցույցները և չափորոշիչները.

- «Հետազոտության շրջանակի» ստեղծում, որը ցույց կտա, թե գնահատման ենթակա այս կամ այն ոլորտում ինչպես են սովորաբար առաջանում կոռուպցիոն ռիսկերը,
- «Գործողությունների սխեմայի» ստեղծում, որը ցույց կտա, թե ինչպես պետք է գործեն կոնկրետ մարմնի ներքին վերահսկողական մեխանիզմները, ընթացակարգերն ու ոլորտը ղեկավարող կառույցները՝ ըստ ՀՀ օրենսդրության, նորմատիվ ակտերի ու կանոնների,
- Բացերի գնահատում, որը, ելնելով ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ քաղաքացիների փորձառությունից, հնարավորություն կընձեռի բացահայտել օրենսդրորեն սահմանված և իրականում ընթացող վարչարարության անհամապատասխանությունները,
- Առաջարկել գործողություններ, որոնք ուղղակիորեն կապված են գնահատման ընթացքում հայտնաբերված բացերի և խոցելի կողմերի հետ,
- Հավաստիացնել, որ ԿԿՀ-ն և պատասխանատու խմբերը կարող են հանրային կառավարման մարմիններում իրականացնել առաջարկությունների

կատարման արդյունավետ մոնիթորինգ և գնահատում և ներկայացնել հաշվետվություն կառավարությանը, խորհրդարանին և հանրությանը:

Փորձագիտական խմբի առաջարկությամբ ծավալվել են քննարկումներ ՀՀ արդարադատության նախարարության հետ առ այն, թե արդյոք վերոնշյալ գնահատումներն իրականացնելու ու կատարման ընթացքը մշտադիտարկելու ընթացքում ԿԿՀ պետք է գործի որպես անկախ մշտադիտարկող մարմին, թե այդ գործառույթը կարող են ստանձնել հանրային կառավարման մարմինները՝ գործելով ինքնուրույն և իրականացնելով կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատում:

Ըստ փորձագիտական խմբի՝ նշված երկու մոտեցումները դիտարկելիս, ինչպես նաև առհասարակ կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հիմնական դրույթները.

1) Գնահատման մեթոդաբանական խմբի գտնվելու վայրն ու գործառույթը՝ Ինքնագնահատման մոտեցումը, գործում է այն սկզբունքով, որ կոռուպցիայի կանխարգելման գործառույթը փոխանցվում է հանրային կառավարման գնահատվող մարմնին: Խնդիրն այն է,, թե արդյոք գնահատվող մարմինները կարող են ինքնուրույն, անկախ, օբյեկտիվորեն և խստորեն գնահատել կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ապահովված սեփական առաջընթացը և հրապարակավ ու ազնվորեն զեկուցել արդյունքների մասին: Կարելի է արձանագրել, որ, օրինակ, մարմնի ներսում աշխատանքային խմբի ստեղծման պարագայում առնվազն ղեկավար կազմը գործելու է հնարավոր շահերի բախման իրավիճակում, ինչն ինքնին կասկածի տակ է թողնելու գնահատման օբյեկտիվությունը:
2) Տարբերություններ տվյալների հավաքագրման և տեղեկատվության ստացման համատեքստում՝

   Հանրային կառավարման մարմինների կողմից ինքնագնահատման գործընթացն իրականացվում է հարցաշարերի և տվյալների հավաքագրման ստուգաթերթիկների միջոցով: Մեթոդական մյուս՝ անկախ գնահատման առաջարկվող մոտեցումը նույնպես կարող է ներառել նման մեթոդներ՝ միևնույն ժամանակ շեշտը դնելով ավելի շատ որակական հարցազրույցների և նպատակային (ֆոկուս-խմբերի) քննարկումների վրա:

3) Տևողություն և ժամանակ՝

   Անկախ գնահատումն առավել ընդգրկուն է և ժամանակատար (առնվազն 3 ամիս հանրային կառավարման մարմնի սկզբնական գնահատման համար, որին

հաջորդում է հետագա վերահսկողություն, որը կարող է տևել 2 կամ ավելի տարի): Որակյալ ինքնագնահատումը նույնպես արագ գործընթաց չէ, հատկապես եթե կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցների ստեղծման առումով կոնկրետ մարմնին աջակցություն է անհրաժեշտ: Ի հակադրություն վերոշարադրյալի՝ հանրային կառավարման մարմիններում հարցաշարերի և ստուգաթերթիկների բաշխման և հավաքման միջոցով կատարվող ինքնագնահատումը կարող է բավականաչափ արագ լինել:

Հաշվի առնելով վերը նշված գործոնները՝ փորձագիտական խմբի կողմից առաջարկվել է որդեգրել հիբրիդային մեթոդաբանություն, որը կներառեր թե՛ հանրային կառավարման մարմնի կողմից հարցաշարերի և ստուգաթերթերի միջոցով ինքնագնահատումը, թե՛ Հանձնաժողովին կվերապահեր տեղում ուսումնասիրություններ, հարցազրույցներ, ֆոկուս խմբերի հանդիպումներ իրականացնելու լիազորություն:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր գործունեությունն այս ոլորտում իրականացրել է երկու հիմնական ուղղություններով.

- Միջազգային ստանդարտներին համապատասխանող, ինչպես նաև վերը թվարկված բոլոր ռիսկային գործոններին բավարար հակակշիռ առաջարկող կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման մոդելի բացահայտում և տեղայնացում.
- Հանրային կառավարման ոլորտում առավել ռիսկային՝ բոլոր մարմինների համար միասնական գործառույթների դուրսբերում և դրանց համապարփակ գնահատում՝ կոռուպցիոն հնարավոր ռիսկերի դուրսբերման նպատակով:

Հանձնաժողովի համար ակնհայտ է, որ կոռուպցիան խթանող գործոններից թերևս ամենաակնառուն անարդյունավետ վարչարարությունն է. հանրային կառավարման համակարգում առանձին դեպքերում հանդիպող խրթին ենթակառուցվածքները, բարդ և չփոխկապակցված գործընթացները, վերահսկողական մեխանիզմների խեղաթյուրվածությունը կամ անաշխատունակությունը: Այս տեսանկյունից Հանձնաժողովը կարևորվում է հակակոռուպցիոն ստանդարտների ներմուծումը, որը կսահմանի այն հիմնական սկզբունքները և պահանջները, որոնք պետք է պարտադիր կերպով կիրառվեն հանրային կառավարման բոլոր մարմիններում առանց բացառության, հետևաբար նաև ապահովեն արդյունավետ վարչարարության հասնելու տեսլականի իրատեսականությունը: Ստանդարտները պետք է արտացոլեն միջազգային հեղինակավոր կառուցակարգերը և հնարավորինս զերծ մնա տեղական սովորութային կառուցակարգերին ադապտացումից, որպեսզի իրապես հնարավոր

դառնա համակարգի առողջացումն ու վերափոխումը: Այս համատեքստում 2021 թվականի ընթացքում Հանձնաժողովը խորքային կերպով ուսումնասիրել է Ստանդարտների միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ISO) ստանդարտները, մասնավորապես՝ ISO 3700-ն, որը կաշառակերության դեմ պայքարի համընդհանուր ճանաչում ունեցող ստանդարտ է և նպատակ ունի օգնել կազմակերպություններին գործարկել կաշառակերության դեմ պայքարի կառավարման համակարգը և խթանել բարեվարքության մշակույթը՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի կառավարման հիմքով: Նշված ստանդարտի կիրառումն ու տեղայնացումը կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման համար դարձել է առաջնահերթություն:

Այս ոլորտում գործընկեր երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ISO ստանդարտները կիրառվել են որպես ռիսկերի գնահատման մեթոդաբանության հիմք, ինչպես նաև առկա է պետական կառավարման մարմինների սերտիֆիկացման փորձ:

Այսպես օրինակ՝

1. Սինգապուրում գործում է Կոռուպցիոն գործունեության քննության բյուրո, (այսուհետ՝ Բյուրո,) որը հիմնադրվել է 1952 թվականին՝ որպես կոռուպցիան կանխարգելող և դրա դեմ պայքարող անկախ մարմին: Այն ստեղծվել է Սինգապուրի ոստիկանության հակակոռուպցիոն բաժնի հիման վրա:

Բյուրոն ներգրավված է հանրային ծառայության բարեփոխումների գործընթացում և նպատակն է հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության մեխանիզմների կատարելագործումը՝ առաջին հերթին գործունեության ինդիկատորների ներդրման հաշվին: Նպատակն է վերանայել ամբողջ քննչական գործընթացը՝ ISO միջազգային չափանիշների պահանջներին համապատասխան:

2. ՈՒկրաինայի Հանրապետության ազգային հակակոռուպցիոն բյուրոն (այսուհետ՝ Բյուրո), որի ստեղծման մասին օրենքը ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 25–ին և ունի շուրջ 350 աշխատակից, նույնպես որպես ռիսկերի գնահատման գործիք կիրառում է ISO միջազգային ստանդարտները:

3. Ինդոնեզիայում գործում է Կոռուպցիայի հաղթահարման կոմիտեն, (այսուհետ՝ Կոմիտե), որը ստեղծվել է 2002 թվականին «Կոռուպցիայի հաղթահարման կոմիտեի» մասին օրենքով: Կոմիտեի գործառույթների շրջանակն է կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող կառույցների համակարգումը, կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող կառույցների վերահսկողությունը, կոռուպցիոն հանցանքների քննությունը,

կոռուպցիայի կանխարգելումը և պետության վարչարարության դիտարկումը՝ այստեղ ևս առկա է ISO միջազգային ստանդարտների ԲԵԽ՝ որպես ռիսկերի գնահատման գործիք:

4. Հարավային Կորեայում գործում է Հակակոռուպցիոն և քաղաքացիական իրավունքների հանձնաժողովը, (այսուհետ՝ Հանձնաժողով), որը ձևավորվել է 2008թ. փետրվարի 29-ին՝ Կորեայի Օմբուդսմենի, Կորեայի կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովի և Վարչական բողոքների հանձնաժողովի միավորման արդյունքում: Այս երեք կառույցների միավորման արդյունքում մեկ պատուհանի սկզբունքով, քաղաքացիները կարող են ստանալ հանրային, վարչական բողոքների ներկայացման և կոռուպցիայի դեմ պայքարի մեկ կազմակերպություն՝ ծառայության մատուցման ավելի արագ և հարմար պայմաններ: Հարավային Կորեայում առկա է պետական կառավարման մարմինների ISO միջազգային ստանդարտներին համապատասխան սերտիֆիկացման հաջողված փորձ:

2021 թվականի ավարտին Հանձնաժողովը անձնակազմի մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով՝ կնքել է մտադրությունների հուշագիր, համաձայն որի «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի աջակցությամբ 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում միջազգային փորձագետների ներուժով պետք է կազմակերպվեն ISO 37001:2016 և ISO 37000:2021 ստանդարտների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Բուն մեթոդաբանության մշակման աշխատանքները նախատեսված են 2022 թվականին:

Հարկ է նաև նշել, որ 2021 թվականին ԵԽ երևանյան գրասենյակի ներուժով մշակվել են Տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման մեթոդաբանությունը և կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման էլեկտրոնային գործիքը, որը փորձնական ծրագրով պետք է կիրառվի 2022 թվականին: Նշված մեթոդաբանության և էլեկտրոնային գործիքի մշակման աշխատանքներին խորհրդատվական եզրակացությամբ մասնակցել է նաև Հանձնաժողովը:

Չնայած մեթոդաբանությունը մշակված էր բավականին մանրամասն՝ այնուամենայնիվ, Հանձնաժողովի կողմից կատարված վերլուծության համաձայն՝ առկա էին ռիսկերի գնահատման և մեթոդաբանության կիրառման թերություններ, որոնց պատճառով էլ Հանձնաժողովը հնարավորություն չունեցավ մեթոդաբանությունը որդեգրել և հաստատել, որպես ՏԻՄ-երում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանություն:

Հանձնաժողովի համար ակնհայտ է, սակայն, որ առկա են այնպիսի գործառույթներ, որոնք, լինելով առավել ռիսկային, պահանջում են առավել խորքային ուսումնասիրություն և կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ուղղված առավել ընդգրկուն մեթոդներ: Հանրային կառավարման համակարգում առավել ռիսկային գործառույթները վերհանելու նպատակով Հանձնաժողովի առաջարկությամբ կազմվել է աշխատանքային խումբ, որը ներառել է ԱՄՆ ՄԶԳ աջակցության ծրագրի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի ոլորտային փորձագետների: Աշխատանքային խումբը կազմել և Հանձնաժողովին է ներկայացրել վերլուծություն, ըստ որի դուրս են բերվել հանրային կառավարման առավել ռիսկային ոլորտները: Դրանք են՝ մարդկային ռեսուրսների կառավարում, ֆոնդերի և ֆինանսական ռեսուրսների կառավարում, պետական գնումներ: Առավել ռիսկային ոլորտները դուրս բերելուց զատ աշխատանքային խմբի կողմից դուրս են բերվել նաև կոռուպցիոն ռիսկի գնահատման հաջողության չափորոշիչները.

ա. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության բովանդակությունը և որակը (այն վերաբերում է այն բանին,, թե որքանով է գործնական մեթոդաբանությունը, իրագործելի և կոնկրետ):

բ. Նման գնահատման օրինաչափությունը (արդյունավետ լինելու համար պետք է կոռուպցիոն ռիսկերի գնահատում լինի կանոնավոր՝ տարեկան, երկու տարին մեկ անգամ կամ երեք տարին մեկ անգամ):

գ. Իրականացնող կազմակերպության կարողությունները, հակակոռուպցիոն իրավական և ինստիտուցիոնալ դաշտը, կոռուպցիոն հակում ունեցող ոլորտին առնչվող գիտելիքները, կառավարչական, կազմակերպչական և այլ հմտությունները:

դ. Ֆինանսական ռեսուրսները՝ ապահովելու, որ այս գնահատումները կպահպանվեն և կհաստատվեն որպես հակակոռուպցիոն կանխարգելիչ առանցքային միջոցառումներից մեկը:

ե. Ոլորտային գերատեսչությունների մասնակցությունը՝ առաջնահերթ/բացահայտված ռիսկերը կառավարելու և համապատասխան ներքին տեղեկատվության ապահովման համար:

զ. Արդյունավետ հսկողություն կոռուպցիոն ռիսկերի գնահատման նկատմամբ (օրինակ՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման պլանների մշակում և իրականացում)

է. Քաղաքական կամք և հակակոռուպցիոն հանձնառություն կառավարության բարձրագույն ղեկավարության կողմից՝ կոռուպցիոն գործոնների վերացման գնահատման համար:

Ելնելով վերը նշված վերլուծությունից՝ Հանձնաժողովը 2022 թվականի համար նախանշել է երկու առաջնահերթ ոլորտ, որտեղ նախատեսում է իրականացնել խորքային գնահատականներ և արդյունքներն ամփոփել հրապարակային զեկույցների տեսքով: Հանձնաժողովի գնահատմամբ հանրային կառավարման մեջ բարեվարքության ամրապնդման տեսանկյունից առավել ռիսկային ոլորտներն են քաղաքացիական ծառայության և պետական գնումների ոլորտները: Այս առնչությամբ Հանձնաժողովի եզրահանգումներն առավել ընդգծված կերպով հաստատվել են Հանձնաժողովի գործունեության ընթացքում մեդիա մոնիթորինգի արդյունքում դուրս բերված մի շարք հրապարակումների լույսի ներքո, որոնք բազմիցս մատնանշում են պետական գնումների գործընթացում հնարավոր ազդեցությունների կիրառման, թվացյալ շահերի բախման և հովանավորչության դրսևորումների տարածվածությունը:

XI. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հաստիքացուցակը հաստատվել է 2020 թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ կառավարության 1500-Ա որոշմամբ: Հանձնաժողովի հաստիքային միավորների թիվը 2020 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ սահմանված է եղել 40, որից հետո 2021 թվականին կառավարության և վարչապետի համապատասխան որոշումներով ավելացել է՝ հասնելով 57 հաստիքային միավորի: Հարկ է նշել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման N 6 հավելվածով Հանձնաժողովի աշխատողների առավելագույն թիվը սահմանված է 57: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին» և ՀՀ վարչապետի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» 706-Ա որոշումները՝ 2021 թվականի հունվարի 18-ին Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի համապատասխան իրավական ակտերով հաստատվել են Հանձնաժողովի անվանացանկը և պաշտոնի անձնագրերը: Ըստ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով անվանացանկի և պաշտոնի անձնագրերի հաստատման փուլից հետո՝ 2021

թվականի փետրվար ամսից, սկսվել է Հանձնաժողովի համալրման գործընթացը, որը մինչ այսօր շարունակական բնույթ է կրում:

2022 թվականի մարտի 25-ի դրությամբ հանձնաժողովը անցկացնում և անցկացրել է ավելի քան 80 և ավելի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ /գործընթացը առ այսօր շարունակաբար իրականացվում է/, իսկ անձնակազմի համալրվածությունը կազմում է.

առկա է 57 հաստիքային միավոր և օրենքով սահմանված կարգով հաստիքացուցակով սահմանված աշխատողների քանակի նկատմամբ հաշվարկված 10 տոկոսի չափով ավելացված փորձագետների հաստիքային միավոր, ընդհանուր՝ 63, որից համալրված են 42-ը կամ 66 տոկոսը, թափուր են 15 քաղաքացիական ծառայության, 3 քաղաքացիական աշխատանքի և տեխնիկական սպասարկում իրականացնող հաստիքային միավոր և 3 միավոր փորձագետի պաշտոններ կամ ընդհանուրի 34 տոկոսը:



Բնականոն և անխափան գործունեության ապահովման նպատակով Հանձնաժողովը 2022 թվականի առաջին կիսամյակում նախատեսել է ստեղծել աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ («Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի վարչություն», «Քարտուղարություն», «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն») և գլխավոր քարտուղարի, վարորդի հաստիքներ, ինչը բխում է նաև Հայաստանի

Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «5.5 ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ» բաժնի պահանջներից, որոնց համաձայն՝ Կառավարությունը օրենսդրության զարգացման, անհրաժեշտ գործիքակազմի և նյութատեխնիկական պահանջների բավարարման հարցերում շարունակելու է աջակցել Հանձնաժողովին՝ իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով: